

ՄԱՍ Գ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԳՐԵՐԻՅ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 AL-RAWḌ AL-ZĀHIR FĪ SĪRAT AL-MALIK AL-ZĀHIR

«ԾԱՂԿՈՒՆ ՊԱՐՏԵԶ ԱԼ-ՄԱԼԻԳ ԱԼ-ԶԱՀԻՐԻ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ»

էջ 191

Հայոց իշխողի, Ալլահն անիծի նրան, արշավանքը Հալեպի դեմ և պարտված վերադարձը

Այս տարում (իմա՝ հիջրայի 662՝ 1263 թ. նոյ. 4 – 1264 թ. հոկտ. 23) Կոստանդինի որդի Հեթումը¹ Հայոց իշխողը, Բարձրյալ Ալլահն անիծի նրան, վերադարձավ Հուլաղուի² մոտից, Ալլահն անիծի նրան, և երբ ժամանեց, իր երկիր չմտավ, այլ ուղղվեց Ռումի տեր սուլթան Ռուքն ալ-Դինի մոտ³: Երբ նրա մոտ հասավ, վերջինս մտադրվեց անակնկալ կերպով բռնել նրան և մեղքը թուրքմեններին վերագրել: Բռնակալը [սակայն] հասկացել էր սա և իրեն ուղեկից էր վերցրել Հուլաղուի երկրի դատավորին (qāḍī), որպեսզի վերջինս հաշտություն հաստատի իր և սուլթան Ռուքն ալ-Դինի միջև: Հայոց իշխողը նրան շատ ընծաներ էր շնորհել՝ իր կողմը գրավելու նպատակով՝ ասելով. «Ես չեմ կարող Ռումի երկիր մտնել առանց քաթարական գորախմբի ուղեկցությամբ, որ կապահովի իմ անվտանգությունը»: [Այդ ժամ] Կադին գրեց Ռումում գտնվող թաթարներին, և նրանցից մի զորախումբ եկավ՝ մոտ չորս հարյուր հեծյալից բաղկացած: Այդ բանից հետո [միայն] նա ճանապարհ ընկավ: Ռումի տերը դիմավորեց նրան և իջավ ձիուց՝ Հուլաղուի կադին տեսնելով, իսկ Հայը չիջավ: Նրանք երկուսն էլ թանկարժեք նվերներ տվեցին իրար: Ռումի տիրոջ նվերը ներառում էր 14 նժույգ և 40 հզ. դիրհամ, արքունիքի (բնագրում՝ al-mağlis) ամբողջ

ոսկյա և արծաթյա սպասքը, եզներ և այլն, իսկ հայր նրան տվեց 4 բերդ: [Այնուհետև] բոլորով ուղևորվեցին դեպի Հիրկալա⁴, որտեղ դաշինք կռեցին և համաձայնություն եկան⁵:

Հայն այնուհետև զբաղվեց իր բոլոր նգովյալ զորքերը հավաքագրելով՝ իսլամական երկրներն ասպատակելու նպատակով: Նա շարժվեց և երբ Սարվանդիքարի բերդ հասավ, իր բանակին հայտարարեց, որ երեք օրվա օրապահիկ վերցնեն: Նրա զորքում Բանու Քիլաբ ցեղից⁶ կային 1000 բեդվին հեծյալներ: Այդպես շարժվեցին Այն Թաբի⁷ վրա⁸:

Սուլթանն իր հետախուզական միջոցներով տեղեկացել էր այս համաձայնության մասին, ուստի սուրհանդակ ուղարկեց՝ Համայի և Հոմսի զորքերին հրամայելու, որ նրանք ճամփա ընկնեն [նրանց ընդառաջ]: Այդպես հաղթական զորքերից մի զորաբանակ դուրս եկավ և հարձակվեց հայոց զորքի վրա, գերի վերցրեց նրանց իշխաններից մեկին, իսկ 100 երկսպասավոր ուղտ: Նրանք պարտված հետ դարձան: Նրանցից սպանվեցին 30 հոգի, Համմուսի⁹ տերը՝ Բարուն Բահրամը (իմա՝ պարոն Վահրամը)¹⁰, ով արքայի ազգականներից էր, շատ ծանր վիրավորվեց¹¹:

Այս բանից հետո [Հեթումը] գրեց Ռումում գտնվող թաթարներին, որոնք թվով յոթ հարյուր հեծյալ էին, և նրանց բերել տվեց՝ նպատակ ունենալով թիրախել Ասորիքը: [Այս անգամ էլ], երբ Հարիմ¹² հասան, առատ ձյուն տեղաց: Հիշյալ բռնակալը գրել էր նաև Անտիոք¹³ և աջակցություն հայցել: Այնտեղից օգնություն էին եկել 150 հեծյալ, որոնք բոլորը սաբակուջ էին հագել՝ թաթարների նմանվելու նպատակով: Բոլորով հավաքվեցին Հարիմի մոտ, բայց Ալլահն [այնպիսի առատ] ձյուն և անձրև ուղարկեց, որ քիչ էր մնում, որ [բոլորն էլ] կոտորվեն:

Ինչ վերաբերում է հաղթական բանակին, ապա այն դուրս էր եկել նրանց ընդառաջ: Նրանց նորություններ հասան, որ նրանց սնունդը վերջացել է, վախեցած են և շտապում են նահանջել: Նա (իմա՝ Հեթումը) իր զինակիցներից կորցրել էր 120 հեծյալ, 30 թաթար [գորական] և վեց անտիոքացի ասպետ, ինչպես նաև մի խումբ իր հետևակայիներից: Իսլամի հաղթանակն [ակնհայտ էր]՝ շնորհիվ այս

սուլթանի մտադրության, ում աջակից են արքաներն ու հրեշտակները, օգնում է [անգամ] երկինքը՝ մերթ իր բոցկլտացող ասուպներով, մերթ անձրևի և ձյան տարափոփոխ տեղումներով: Թշնամիների բուլոր զորախմբերը պարտվում են նրա օրհնյալ համոզմունքներից, թող Ալլահն ավելացնի նրա զորությունը և իր հավատով պարտության մատնի հեթանոսությանը¹⁴:

էջ 195

[Հիջրայի 662 թ.] Զուժաղա երկրորդ ամսի կեսերին (1264 թ. ապրիլի կեսեր) ձերբակալվեցին երկու թաթար լրտեսներ, քանի որ սուլթանը շատ մեծ կարևորություն էր տալիս հետախույզների տեղեկությունների օգտագործմանը, նրանց ռոճիկների և վարձավճարների նշանակմանը¹⁵: Նա նույնպես հետախույզներ էր ուղարկել Հուլաղուի մոտ, ովքեր [ծպտված] հաստատվել էին նրա արքունիքում (բնագրում՝ al-urdu), և հենց նրանք էին հայտնել, որ Հուլավուլն պատրաստվում է երկու հետախույզ ուղարկել՝ հաղորդելով նրանց անունները: Եվ երբ վերջիններս Սիս էին հասել, [այլ] հետախույզներ էլ տվել էին նրանց նկարագրությունները՝ հրահանգվելով հետևել նրանց [հետագա] տեղաշարժը: Երբ նրանք Աքրա են եկել, [այլ] հետախույզներ էր իրազեկել են, որ նրանք [արդեն] Աքրայում¹⁶ են: [Ապա] նրանք նաև էին նստել՝ Դամիետտա¹⁷ գնալու նպատակով [անտեղյակ], որ իրենց բոլոր ճանապարհները հսկողության տակ են: Երբ վերջապես ժամանել են, նրանց հապշտապ սուլթանի մոտ են բերել: Նա հարցաքննեց նրանց, տվեց նրանց ծածկագրերը (բնագրում՝ amāyir), որ նրանք կարդացին: Նրանց մոտ հայտնաբերվեց Հուլաղուից Աթաբեկին ուղղված ֆիրման, որում սիրաշահում էր նրան և [փորձում] իր կողմը գրավել: Նա համոզված էր, որ այդ կերպ վարչակարգի մեջ պառակտում կգցի, քանզի երբ այդ [ֆիրմանը] սուլթանի ձեռքն ընկնի, վերջինս անհապաղ կմեղադրի իր իշխանավորներից ամենաբարձրին (այսինքն՝ աթաբեկին), իսկ աթաբեկը [չի կարողանա] պատասխանել, թե ինչ առնչություն ունի ինքն այդ անհեթեթությանը: Սուլթանը հասկացավ այս խաբուսիկ հնարքը և պահանջեց,

որ աթաբեկն անմիջապես իրեն ներկայանա և նրան հասկացրեց, որ դա հնարք է՝ ցույց տալով գրությունը: Նա ասաց նրան. «Ես սրամուժ ֆո մասին նշված և ոչ մի բանի չեմ հավատացել»: Ասաց և հրամայեց պատռել և ծվեն-ծվեն անել այն: Սրանով սուլթանն ի ցույց դրեց Հուլադուլի թուլությունը, և որ ինքը հետևողական է ամեն ինչի նկատմամբ (բառացի՝ ամուր բռնած է ամեն ինչից)¹⁸: Այս հարցում նրա վարմունքը շատ վեհ էր, և չլսված է, որ նախկինում որևէ տիրակալ նույն հարցում այդ կերպ վարված և իր լավ նպատակներին այդօրինակ բարերարությամբ հասած լինի:

էջ 196

[Մուսուլմանական] երկրների վրա Հայոց իշխողի ևս մի արշավանքի և նրա ձգտման հուսախաբության մասին

Այս տարում (իմա՝ հիջրայի 662 թ.) Հայոց իշխող Հեթումը կրկին զբաղվեց բոլոր կողմերից նգովյալ զորքերի հավաքագրմամբ: Նա հազար թաթարական վերնագզեստ և նույնքան սարակուշ պատրաստել տվեց, որ հագցրեց իր զինակիցներին՝ վախեցնելու համար, թե իբր թաթարական օժանդակ զորքեր են: Սուլթանը Դամասկոս սուրհանդակ հղեց՝ [հրամայելով], որ այնտեղից Հոմա զորքեր ուղարկվեն, ինչպես նաև մի զորախումբ էլ Համայից դուրս գա: Հրամայվեց նաև, որ Ասորիքի բեգվիներն այդ տարի անապատ դուրս չգան: [Այս ընթացքում] ճամփա ընկավ էմիր Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբին և հարձակվեց Մարզաբանի¹⁹ վրա՝ սպանելով և գերելով, ապա ողջ-առողջ հետ դարձավ: [Այնուհետև] հարձակումներ ձեռնարկվեցին բոլոր կողմերից: Երբ թշնամին զգաց այդ ձեռնարկումների վճռականությունը, իր նժույգները պարտված հետ քաշեց, նրանց օժանդակ զորամիավորումները ցրիվ-ցրիվ եղան, նրանց ածուխները մարեցին (իմա՝ հանդգնությունը նվազեց), մնացին վախեցած և ապշահար: Ապա [մուսուլմանական] զորքերը հարձակվեցին Անտիոքի վրա՝ ավարանեցին՝ սպանելի ու գերության մատնելով [չատերին]²⁰:

էջ 201

Այս թվականին (հիշրայի 662 թ.) գրողթյուն ստացվեց ալ-Բիրայի կառավարիչներից առ այն, որ Սարիմ ալ-Դին Բաքթաշ ալ-Ջահիդին իր զորախմբով արշավել ու գրոհել է Հռոմկլայի դարպասները՝ մի քանի անգամ հարձակում գործելով նրա վրա²¹:

էջ 228

[Սուլթանը] վերաշինման աշխատանքների²² համար ուղարկեց էմիրներ Ալամ ալ-Դինին, Սայֆ ալ-Դին Բալաբան ալ-Ջայլիին և Ռուքն ալ-Դին ալ-Սարվիին: Յուրաքանչյուր էմիր իր հետ երեք հոգի բերեց՝ վերանորոգման աշխատանքներին աջակցելու: Ավարտելուն պես, նրանց [հանձնարարված էր] ուղղություն վերցնել դեպի Թել Բաշիր²³՝ Հայոց երկրի վրա արշավելու նպատակով:

էջ 253

[Մուսուլմանական] զորքի հաղթական Սուրի (Տյուրոսի) վրա

Երբ սուլթանն Աքրայի կողմերը հասավ, նա էմիր Ալա ալ-Դին ալ-Բունդուկդարին²⁴ և էմիր Իզզ ալ-Դին Ուղան ալ-Ռուքնիին մի զորախմբով ուղարկեց Տյուրոսի կողմերը: Նրանք լեռները մտան գիշերը և դժվարանցանելի տեղերը հաղթահարելիս մեծ նեղություն կրեցին: Ապա գրոհեցին Տյուրոսը և մեծաքանակ ուղտեր, կովեր և այծեր ավար առան: Նրանք գերեզմարեցին Սսի տիրոջ Քամանդուրին²⁵, և նրա հետ ևս երկու հոգու: Նրանք ապաստան էին գտել մի աշտարակում, որը [մուսուլմանները] վերցրին ապահովության երաշխիքով: Գերի ընկան Տյուրոսի վեզիրը և մի խումբ ֆրանկներ: Էմիր Սայֆ ալ-Դին Աթամիշն ուղղություն վերցրեց դեպի Սայդա (Սիդոն), բայց սուլթանը նրան հրամայեց շարժվել դեպի Սաֆադ:

Սուլթանը ճանապարհվեց դեպի Աքթա (Աքրա) և ճամբարեց ջրերով հարուստ մի իջևանում, որը հայտնի էր ալ-Ֆարաջ անունով և գտնվում էր Մասսարաթ ալ-Արման (բառացի՝ «Հայոց ձիթհանի») ²⁶ մոտ: Սուլթանն էմիրներ Բադր ալ-Դին Այդամուրեիին և Բադր ալ-Դին

Բայսարիին²⁷ ուղարկեց ալ-Կարն (ալ-Կուրայն), իսկ էմիր Ֆախր ալ-Դին ալ-Հոմսիին՝ Ամիլա լեռան կողմը: Այդպես զորքերը բոլոր կողմերից հարձակման անցան: Էմիրները պաշարման մեջ առան ալ-Կարնը, գրավվեց Աքրային մոտ գտնվող մի բերդ: Այնքան շատ ավար վերցրին, որ այլևս չէր գտնվում մեկը, որ գներ մի կով կամ մի գոմշացու: Հարձակումները ֆրանկների հողերի վրա ընդլայնվեցին նաև Տրիպոլիի սահմաններից Արսուֆի մերձակայքի վրա: Տրիպոլի ճանապարհված զորքը շարժվեց այդ ուղղությամբ, Տյուրոսի դեմ շարժված զորքը մեկ այլ ուղղությամբ, սուլթանը շարժվեց Աքրայի ուղղությամբ, իսկ էմիր Նասիր ալ-Դին ալ-Կայմարին ուղղվեց դեպի Ասլիս:

Այս միջոցին նամակ ստացվեց Աքրայի Հիվանդախնամ [ասպետների] առաջնորդից՝ հասցեագրված Աթաբեկին, առ այն, որ ինքը ձգտում է հաշտության՝ ակնարկելով այն բարեքնների մասին, որ իրենք ստացել են Տրիպոլիի և Հայոց երկրի բարեբեր հողերից: Աթաբեկը նրանց սպառնալիքներով և ահաբեկությամբ լի պատասխան գրեց:

Սուլթանն այնուհետև զբաղվեց Սաֆադի հարցով, որովհետև այն պատառ էր Ասորիքի կոկորդուս և ոսկոր իսլամի [երկրների] կրծքում:

էջ 269

Սսի արշավանք²⁸ և նրա արքայի գերեվարումը, նրա եղբոր և հորեղբոր սպանությունը, հորեղբորորդու գերեվարումը

Մենք արդեն հիշատակել ենք Թաքֆուրի՝ Սսի տիրոջ նենգամտության մասին²⁹ և այն մասին, թե ինչպես Սաֆադի զործը վերջացնելուց հետո սուլթանն օթևան էր առել ալ-Ջասուրայում և հրամայել էր, որ զորքից ոչ մեկը Դամասկոս չմտնի: [Սակայն նրանցից ոմանք] համաձայնության եկան և մեկ առ մեկ ծածկաբար Դամասկոս մտան: Սուլթանը կարգադրեց, որ նրանց պարաններով կապած դուրս հանեն [քաղաքից]:

Սուլթանն [այնուհետև] զորակոչեց ալ-Մալիք ալ-Մանսուրին և նրա ծառայության տակ գտնվող էմիրներին՝ Իզզ ալ-Դին Ուղանին³⁰, Սալֆ ալ-Դին Կալավուն ալ-Ալֆիին³¹ և հրամայեց նրանց ենթարկվել (բառացի՝ հարգել) Համայի տիրոջը: Հրահանգագիր տրվեց, որ պարունակում էր նրանց բոլոր անելիքների վերաբերյալ [հանձնարարա-

կաններ]: Նրանք ճանապարհ ընկան [Հիջրայի 664 թ.] Ջու ալ-կադա
ամսի 5-ին (1266 թ. օգոստոսի 8), հասան Դարպսակ, որից հետո զորա-
կարգերով (muṭlibīn) Կապաններ³² մտան: Սակայն Վասակի որդի Կոս-
տանդինի որդի Հեթումը՝ al-Malik al-muḡīr-ը (al-Malik al-Muḡīr Haytūm
ibn Kuṣṭantin ibn Bāsāk³³), թագավորեցրել էր իր որդի Լևոնին, իսկ ինքը
վանք էր մտել³⁴: Երբ մուսուլմանները մարտաշարքերի բաժանվեցին,
Լևոնը՝ Սսի իշխողը, [նույնպես] կանգ առավ՝ իր զորքերին մարտա-
կան դասավորություն տալու: Նրանք կարծում էին, որ մուսուլման-
ները չեն կարողանալու լեռները բարձրանալ, որովհետև Թաքֆուրը
լեռների գագաթներին աշտարակներ էր կառուցել: Այս առիթով բա-
նաստեղծը գրում է.

«Եթե նա պատեր է կառուցում իր շուրջը,
Դրանք կապանք են իր համար, ոչ բերդ»:

Ջորքերը մագլցեցին լեռների կատարները, և երբ մարտը մեկ-
նարկեց, արքա պարոն Լևոնը գերի ընկավ, նրա եղբայրը սպանվեց,
սպանվեց և հորեղբայրը: Գուռնդստաբլը՝ նրա մյուս հորեղբայրը,
պարտված նահանջեց: Գերի ընկավ նաև նրա որդին³⁵, իսկ Համմուսի
տերը փախուստի դիմեց: Նրանց տասներկու իշխանները (բնագրում՝
malik, իմա՝ «արքա») ցաքուցրիվ եղան³⁶, իսկ նրանց լավագույն զորա-
կանները և զինվորները սպանվեցին³⁷: Ջորքերն այդ օրն անցան
Մառուիի [կիրճը]³⁸ և օթևանեցին Սարվանդիքարի մերձակայքի Քա-
րանջիլ (Karanǧīl) [բնակավայրում]³⁹: Հաջորդ օրը նրանք կանգ առան
Թիլ Համդուռի մերձակայքում՝ սպանելով, գերելով և հրկիզելով:
Նրանք կրակի տվեցին Համմուսը և Հաջորդ օրը շարժվեցին դեպի
Ջահան գետ, որը հայերը Եփրատ են կոչում, քանի որ այն մեծ գետ է:
[Ջորքերը]՝ էմիրներ Սայֆալ-Դին Ուղանի և Սայֆալ-Դին Կալա-
վուն ալ-Ալֆիի հրամանատարությամբ անցան գետը: Եվ երբ զորքերը
մոտեցան al-ʿAmūdayn-ին⁴⁰, որը տաճարական (sic) [ասպետների
պատկանող] ամուր երկնաբերձ (šāḥiq fī al-hawāʾ) բերդ էր, և օղակեցին
այն, նրա կայազորը համաձայնեց հանձնել այն: Բերդում թաթար
մարտիկներ կային, բացի նրանցից ևս 2200 հոգի: Տղամարդկանց
սպանեցին, իսկ գերիներին բաշխեցին զինվորների մեջ: Այնտեղ մի
խումբ տաճարականներ կային, որոնց սպանեցին, իսկ ամրոցը և նրա
ամբարներն ու պահեստները հրո ճարակ դարձրին⁴¹:

وَجَمَعَ مِنْ مَعَهُ وَوَصَلَ الْبَنَاءَ فِي قَدَمِ الزَّيْمَانِ أَيْ الدَّوْمِكِ فِي جَمْعٍ
 فَقُلْنَا هُوَ وَاصْحَابُهُ وَصَاحِبُ الْعَرَبِ اقْرَبُ الْبَنَاءِ مِنْكُمْ
 وَلَوْ أَطْعَمْنَا أَحَدًا كَانَ لِحَقِّ بَطْنِ عَيْنَا وَلَيْسَ لَكُمْ إِلَّا السَّيْفُ فَخَوَّاهُمْ
 بِجَمَالِ الدِّينِ الْمَذْكُورِ وَزَيْنِ الدِّينِ مَرْدِ بْنِ عِزَّازٍ مِنَ السُّلْطَانِ
 وَقَالُوا لَهُمْ أَنْ كُنْتُمْ كَرِهْتُمْ الْأَقَامَةَ فِي هَذِهِ الْأَرْضِ فَأَفْعَلُوا
 مَا بَشِئْتُمْ فَإِنَّ الْعَسَاكِرَ تَقْصِدُكُمْ إِلَى أَقْصَى الْعَرَبِ وَإِنْ أَرَادْتُمْ
 صَوْنَ أَمْوَالِكُمْ فَادَّوَا الرِّكَاهَ الَّتِي فَرَضَهَا اللَّهُ فَدَخَلَ الْمَذْكُورُونَ
 فِي الطَّاعَةِ وَاسْتَخَرَجَتْ مِنْهُمْ الرِّكَاهَ وَغَيْرَهَا مِنَ الْحَقُوقِ وَذَلِكَ
 فِي حِجَابِ دِي الْآخِرَةِ سَنَهُ أَرْبَعٍ وَبِشِينَ وَسِتِّمِائَةٍ ٥

ذِكْرُ عَزْوَ قَتِيلَيْهِ وَابْنِ مَلِكِهَا
 وَقَتْلُ أَخِيهِ وَعَمِّهِ وَأَسْرُ وَلَدِهِ قَدْ ذَكَرْنَا مُرَافَعَتَهُ
 النِّكَاحُ فَهُوَ صَاحِبُ سَيْسٍ وَإِنَّهُ لَمَّا انفَصَلَ حَدَّثَ صَفْدَةً نَزَلَ
 السُّلْطَانُ عَلَى الْجِسْرِ رَسَمَ بَابَ الْعَسَاكِرِ لَا يَدْخُلُ دِمَشْقَ فَاتَّقَوْا
 أَنْتُمْ تَسْلُوْا وَاحِدًا وَاحِدًا وَدَخَلُوا دِمَشْقَ فَأَمَرَ السُّلْطَانُ بِهَرَمٍ
 فَأَخْرَجُوا مَكْتَفِينَ بِأَجَالِ جَهْرِ السُّلْطَانِ الْمَلِكِ الْمَنْصُورِ وَمِنْ جَرِّ
 فِي خِدْمَتِهِ مِنَ الْأَمْرَاءِ وَهُوَ الْأَمِيرُ عَمْرُ الدِّينِ أَوْغَانُ وَالْأَمِيرُ

Al-Rawḍ al-zāhir-ի Սուլեյմանիյե գրադարանի MS Fatih 4366 ձեռագրի
 այն էջը (89բ), որտեղ սկսվում է «Սուի արշավանքի» մասին պատումը:

Ապա շարժվեցին⁴² դեպի Սիս⁴³ և ավերի ենթարկեցին այն՝ տակնուվրա անելով: Չորքերը մի քանի օր մնացին [քաղաքում]՝ [անվերջ] հրկիզելով, սպանելով և գերեվարելով⁴⁴: Էմիր Իզզ ալ-Դին Ուզանն ուղղվեց դեպի Ռուս, իսկ Էմիր Սայֆ ալ-Դին Կալավուն ալ-Ալֆին դեպի Մսիս, Ագանա, Այաս և Տարսոն՝ [չատերին] սպանելով և հրկիզելով [ամեն ինչ]⁴⁵: Քանդվեց նաև ալ-Սանիյյաթ (al-Taniyyāt)⁴⁶ անունով հայտնի տաճարական⁴⁷ բերդը, նրանց շատուշատ բնակավայրեր՝ բերդեր ու քաղաքներ, հրո ճարակ դարձան, ավերվեցին⁴⁸:

Այս ամբողջ ընթացքում Համայի տերը մնում էր Սոում, և երբ զորքերը վերադարձան, հավաքվեցին և ստացան ավարի իրենց մասը: Արքա Լեոնը և նրա հորեղբորորդին շղթայվեցին⁴⁹: Ձինվորներն իրենց հետ անչափելի քանակով թյամբ ավար վերցրին, այնքան շատ, որ երբ երկու ղերհամով մի գլուխ կով էին վաճառում, գնորդ չէր գտնվում⁵⁰: Չորքի համար ամեն օր մեծածիլ կովեր, գոմշացուկեր և այծեր էին մորթվում: Չորքը ստիպված էր [ավար վերցված անասունների] մի մասը քշել⁵¹:

Երբ այս լուրերը սուլթանին հասան, նա որսով էր զբաղված Ջարուղում: Նա հազար ղինար տվեց ավետիսը բերողին: Ապա սուլթանը մտավ Դամասկոս, պատրաստով թյուն տեսավ և կրկին դուրս եկավ՝ ուղղվելով դեպի Համա՝ այնտեղ տոնը նշելու⁵²: Իսկ այնտեղից Աֆամիյա շարժվեց՝ իսկ այնտեղից Ջու ալ-Հիջլա ամսի 13-ին (1266 թ. սեպտեմբերի 15) դուրս եկավ՝ զորքերին ղեկավորելու: Ավարից սուլթանին հասանելիք բաժինն առանձնացվել էր, սակայն երբ նա ղեկավորեց զորքերին, իր [բաժինն] էլ իր զինվորներին բաշխեց: Նա լավ վերաբերմունք ցուցաբերեց Սսի տիրոջ և նրա հետ եղած մյուս գերիների նկատմամբ⁵³:

Սուլթանը Դամասկոս վերադարձավ Ջու ալ-Հիջլա ամսի 24-ին (1266 թ. սեպտեմբերի 26) և զորակարգով [քաղաք] մտավ՝ իր հետ բերելով Սսի տիրոջը, նրա հորեղբորորդուն և զինակիցներին: Նա պատվո հանդերձների արժանացրեց ասորիքյան էմիրներին և հրամանատարներին: Նա Համայի տիրոջը նժույգներ, գանձեր ուղարկեց, ինչպես նաև պատվո հանդերձներ նրա և նրա բոլոր զինակիցների համար: Ապա հրաժեշտ տվեց նրան և գնաց իր թագավորությունը

(բնագրում mamlaka է, նկատի է առնված Եգիպտոսը): Դամասկոսը լցվեց անչափելի քանակությամբ բարիքներով և ապրանքներով՝ թանկարժեք քարերով և զարդերով, ստրուկներով և մետաքսով: Սուլթանը դրանից և ոչ մի բան իրեն չվերցրեց:

էջ 272

Այս օրերին ժամանեց Սսի տիրոջ դեսպանը՝ արքա Լևոնի վերաբերյալ բանակցելու⁵⁴: [Հիջրայի 665 թ.] Ռաբի առաջին ամսի 22-ին (1266 թ. դեկտեմբերի 21)՝ ուրբաթ օրվա⁵⁵ գիշերը, արձակվեցին նրա կապանքները: Նրա համար նրա երկրի հետ հաշտության պայմանագիր (բնագրում՝ muwāda'a, այն է՝ «թշնամական գործողությունների դադարեցում»-Գ.Դ.) գրվեց մեկ տարի ժամկետով: Ապա սուլթանը ճանապարհ ընկավ դեպի Բիրքաթ ալ-Ջուբբե⁵⁶, պարսանետից կրակելու՝ իրեն ուղեկից վերցնելով Սսի տիրոջը, ում նա զվարճացնում էր և շատ լավ վերաբերվում⁵⁷:

էջ 281

Ժամանեցին Սսի դեսպանները՝ նվերներով⁵⁸: Նրանք տեսան Ֆրանկ դեսպաններին, ինչպես նաև կտրված գլուխներ նիզակների վրա: Բերեցին մի խումբ [ֆրանկների], որ գերի էին ընկել այս արշավանքի ընթացքում և սպանեցին Սաֆադում: Սուլթանը կանչել տվեց ֆրանկների դեսպաններին և ասաց. «Այս արշավանքն ալ-Շակիֆի վրա ձեր հաղթական պատասխանն է: Եվ քանի որ հաշտության հարցը չլուծվեց, ֆրանկների դեսպանները վերադարձան առանց որևէ պատասխանի»:

էջ 282

Այս օրերին (1267 թ. մայիս-Գ.Դ.) ժամանեցին Սսի, ինչպես նաև Բեյրութի դեսպանները՝ մի խումբ մուսուլման գերիների բերելով և վերադարձնելով վաճառականների ունեցվածքը: Նրանց համար պատասխաններ գրվեցին, և նրանք [վերադարձի] ճամփա բռնեցին:

[Զորհերի] շարժը դեպի Անտիոք և նրա առումը

Երբ սուլթանը թողեց Տրիպոլին, ոչ ոքի չասաց, թե որ ուղղությամբ է մտադիր շարժվել: Նա ուղղվեց դեպի Հոմա և կանգ առավ այնտեղ [Հիջրայի 666 թ.] Շաաբան ամսի 27-ին (1268 թ. մայիսի 12): Նա կարգադրեց խուսափել գինի խմելուց և այլ անթույլատրելի զբաղմունքներից՝ հրամայելով մզկիթ կառուցել Հոմսում: Երբ Համա հասավ, գործը երեք մասի բաժանեց. մեկը՝ էմիր Բադր ալ-Դին ալ-Խազինդարի⁵⁹, մյուսը՝ էմիր Իզզ ալ-Դին Իզանի (Ուզան)⁶⁰, երրորդը՝ իր գլխավորութեամբ: Էմիր Բադր ալ-Դին ալ-Խազինդարն ուղղուեց թյուն վերցրեց դեպի ալ-Սուվեյդիյա, էմիր Իզզ ալ-Դին Ուզանը՝ Դարպասակ՝ սպանելով և գերեզմարելով: Հետո նրանք միասին շարժվեցին Անտիոքի վրա: Իսկ սուլթանը զնաց Աֆամիյա⁶¹, այնտեղից՝ ալ-Շուղրի և Բաքթասի⁶² տակ գտնվող կամուրջի ուղղությամբ:

էջ 313

Երբ սուլթանը գրավեց [Անտիոքի] միջնաբերդը⁶³, այն հանձնեց էմիր Բադր ալ-Դին Խազինդարի և էմիր Բադր ալ-Դին Բայսարի ալ-Շամսիի հսկողությամբ: Ինչ վերաբերում է գունդստաբլին⁶⁴, ապա սուլթանն ազատ արձակեց նրան և նրա մերձավորներին: Վերջինս որոշեց Սիս գնալ, և նրան այդ հարցում չմերժեցին:

էջ 318

Այդպես մնաց մինչև 366 թվականը (976 / 977 թ.), երբ Զաֆար իբն Ֆալլահ⁶⁵ իր ենթականերից մեկին ուղարկեց Անտիոքը գրավելու⁶⁶: Նա 5 շաբաթ պաշարման մեջ պահեց այն, բայց գրավել չկարողացավ: Այդ տարում հզոր երկրաշարժ տեղի ունեցավ, որը քանդեց նրա պարսպի մի մասը: Հոռոմների արքան կառավարիչ նշանակեց այնտեղ և նրա հետ 12 հազար շինարարներ ուղարկեց՝ նրա կառույցները վերանորոգելու: [Քաղաքը] լավագույնս վերաշինվեց: Նրա միջնաբերդը կառուցել է Փոկասի որդի Լևոնը⁶⁷, ում ծառայության տակ

մի խոումբ հայեր և այլոք կային, և ամրացրել այն: Նրա մահից հետո [միջնաբերդի] շինարարությունը լրման է հասցրել Բասիլ (Վասիլ) արքան⁶⁸: Այս Բասիլը հենց նա էր, ում մահից հետո վեց հազար ոսկյա զինփառ էին գտել նրա մոտ, մինչդեռ նրա գահակալություն օրոք գանձարանի պաշարն ընդամենը 4 զինփառ էր և ոչ ավել: Նաև նա էր, որ Հայաստան երկրից [հիշրայի] 415 թվականին (1024 / 1025 թ.) գրավել էր Արջիշը⁶⁹: Նա իր համար գերեզման և հսկայական դամբարան էր կառուցել՝ վրան մի վանք, ինչպես նաև մարմարյա շիրիմ: Երբ նա մահամերձ էր, ասել է. «Ամոքալի կլիմի, որ ես արփայի հանդերձով հանդիպեմ Աստծուն, - և ավելացրել, - կթաղեմ ինձ օտարականների մեջ՝ աղփառների ցնցոտիներ հագցնելով»: Նա թագավորել էր 49 տարի և 11 շաբաթ և ապրել 68 տարի: [Անտիոքը] նրանց ձեռքում է մնացել մինչև ***** (բաց է թողնված - Գ.Դ.) [թվականը]:

էջ 320

Ֆրանկները [կրկին] այն (իմա՝ Անտիոքը) գրավել են⁷⁰ մի մարդու դավաճանական միջնորդությունով, ում անունն Արշարգ Հայ⁷¹ էր: Վերջինս և [քաղաքը] պաշարած արքաներից մեկը, որի անունը Մայմուն էր (Բոհեմունդ), համաձայնություն էին եկել, որ հայը լինի այն կողմում, որտեղ որ հիշյալ Մայմունն էր: Նա մի գրություն գրեց և նետով նրան փոխանցեց: Նրանում ասվում էր. «Ես փաղափրեմ կհանձնեմ»: Նրանց միջև պայմանավորվածություն կայացավ: [Բանն այն է, որ քաղաքը պաշարած] արքաների մեջ ավագագույնը Քունդաֆրի⁷² անունով մեկն էր: Երբ Մայմունը վստահացավ, որ հնարքը կաշխատի, նա գնաց այս արքայի մոտ և ասաց. «Ու՛մն է լինելու փաղափր, եթե այն նվաճվի»: Ի վերջո, վճռեցին, որ [քաղաքն] օղակած արքաներից յուրաքանչյուրը տասն օր պաշարի այն, և ում [հաջողվի] գրավել այն իր հերթում, նրանը կլինի: Մայմունի հնարքն անցավ, և երբ նրա հերթը հասավ, գործի դրվեցին աստիճանները: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ նա ստացավ [քաղաքն] ու տեղ դարձավ նրան: Միջնաբերդը շարունակեց պաշտպանվել, որտեղ գտնվում էր Ահմադ իբն Մրվանը⁷³: Ֆրանկները նրա հետ նամակագրություն

հաստատեցին և ապահովության երաշխիք տվեցին: Նա [քաղաքը] նրանց հանձնեց, իսկ վերջիններս էլ հատուցեցին նրան՝ [ազատություն չնորհելով] և ուղարկելով իսլամի երկրները:

էջ 325

Բաղրաս ամրոցի գրավումը Տաճարականների ձեռքից (1268 թ.)

Երբ Ալլահը սուլթանի համար գրավեց Անտիոքը, Դայր Քուշը, վերոհիշյալ մյուս [բերդերը], ինչպես նաև (ալ-Կուսայրի մի մասը), այդ կողմերում այլևս [ոչ մի չգրավված բերդ] չմնաց, բացի Բաղրասից: Բաղրասում եղած Տաճարականները վախի մեջ էին, հատկապես այն բանից հետո, երբ հաշտություն կայացավ Սսի տիրոջ հետ, ուստի նահանջել էին և լքել այն: [Սուլթանն] էմիր Շամս ալ-Դին Ակսունկուրին⁷⁴ բանակի գերագույն ուսթագդարին, ուղարկեց [այնտեղ]: Վերջինս գրավեց այն [հիջրայի 666 թ.] Ռամադան ամսի 13-ին՝ շաբաթ օրը (1268 թ. մայիսի 27)՝ այնտեղ ոչ ոքի չգտնելով՝ բացի մի զառամյալ կնոջից: Այնուամենայնիվ, [բերդի] ամբարներն ու պահեստները լի էին այն ամեն ինչով, որ սովորաբար բերդերում լինում են: [Այդպես] այն իսլամի տիրապետության տակ անցավ առանց որևէ ջանքի:

«Թե երջանկությունն իր աչքերով քեզ կլինի պաշտպան,

ննջի՛ր. կդառնան վախերը բոլոր [խկույն] անխտով:

Նրանով ամուր բռնի՛ր փյունիկին որպես որոգայթ,

Պահի՛ր նրանով երկվորյակներին՝ ինչպես պախուրցով»:

[Այս] վարքագրության հեղինակն ասում է (նկատի ունի ինքն իրեն-Գ.Դ.). «Սալահ ալ-Դինի որդի ալ-Մալիք ալ-Չահիրի որդի ալ-Համայի տեր ալ-Մալիք ալ-Ազիզ իբն ալ-Մալիք ալ-Չահիր իբն Սալահ ալ-Դինի օրոք, Ալլահն օրհնի նրան, հալեպյան զորքը պաշարել է այն յոթ շաբաթ և չի կարողացել գրավել»։ Ալ-Բալագուրին ասել է. «Բաղրասի տարածքը պատկանում էր Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին⁷⁵, ով այն որպես waqf էր տվել բարեգործության նպատակով (fi sabīl al-barr): Երբ մուսուլմաններն արշավանքի էին ելել Ամուրիյայի դեմ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքի հետ, նրանք իրենց կանանց իրենց հետ էին վերցրել՝ մարտական զգոնությունն արթուն պահելու

համար: Եվ երբ նրանք Բաղրասի կիրճն էին մտել մի նեղ կածանով, որ նայում էր հովտին, ուղտերից մեկը վայր է ընկնում՝ վրան նստած կնոջ հետ միասին: Մասլաման հրամայում է կանանց շարունակել քայլել: [Այդ օրվանից] կիրճը կոչվում է «Կանանց կիրճ»: Ալ-Մու-թասիմ [խալիֆան] ճանապարհի եզրով կարճ պատ էր կառուցել տվել: [Ալ-Բալազուրին] ասում է, որ այդ ճանապարհին առյուծներ կային, և ոչ ոք [չէր համարձակվում] քայլել այդ [ճանապարհով]: Այս մասին բողոքեցին ալ-Վալիդ [ի]բն Աբդ ալ-Մալիքին, ով չորս հազար կատաղի գոմշացու ուղարկեց [այնտեղ], և առյուծները վերացան⁷⁶:

Դրանից հետո նա կառուցեց այն (իմա՝ Բաղրասի բերդը-Գ.Դ.) և ամրացրեց: Ամրակայման աշխատանքները լրման հասցրեց ալ-Մալիք Թակֆուր (sic, այսպես սխալով է բնագրում, պետք է լինի՝ Նիկֆուր, որ Նիկեֆորն է)՝ Ռումի արքան, ով [հիջրայի] 358 թ. վերջերին (969 թ.) դուրս էր եկել իսլամի երկրների դեմ: Սպանեց և գերեվարեց, մինչև որ հասավ Ասորիք: Նա գրավեց Մաարրաթ Նասրինը (sic, պետք է լինի՝ Մասրին) և Մաարրաթ ալ-Նումանը, Համան և Հոմար: Հոմսից նա վերցրեց սուրբ Մար Յուհաննա ալ-Անդուլմիսի գլուխը և սրով նվաճեց Արական: Նա էր, որ գրավեց Անտարսուսը, Մարակիյյան և Ջաբալան: Երբ նա կառուցեց այս բերդը՝ Բաղրասը, նրա կառավարիչ նշանակեց մեկին՝ ալ-Բուրջի անուհու՝ նրա մոտ թողնելով հազար մարտիկներ: Նա Բաղրասն այնպես ամրացրեց, որ այն գրեթե անմատչելի դարձավ:

Հետագայում նրան տիրեցին ֆրանկները՝ ժամանակի ընթացքում անընդհատ ամրացնելով այն և ամրակառուցելով: Բայց հետո Ալլահը թուլացրեց նրանց և խլեց նրանցից առանց որևէ հնարքի և կամ ջանքի: [Իրավ], փառք Ամենակարողին: [Բանն այն է, որ] նահատակ սուլթան Սալահ ալ-Դինը, Ալլահն օրհնի նրան, պաշարեց այն և գրավեց ապահովության եռաշխիֆով [հիջրայի] 584 թվականի Շաաբան ամսի 2-ին (1188 թ. սեպտեմբերի 26) և Դարպասակի հետ միասին հանձնեց Ալամ ալ-Դին Սանջար իբն Ջանդարին:

**Սսի տեր Թաֆֆուր Հեթումի հետ հաշտության, նրա որդու
ազատության և Էմիր Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարի
վերադարձի մասին**

[Արդեն] հիշատակել ենք, թե ինչպես էին [մուսուլմանական] զորքերը Սիս արշավել, նրա (նկատի ունի Հեթումին) որդի Լևոնի գեղեվարման մասին, և թե ինչպես էին նրա հոր ղեսպանները պարբերաբար գալիս և գնում՝ սուլթանին առաջարկելով, ինչ կարող էր՝ դրամ և բերդեր: Բարեպաշտությունը նրանից պահանջել էր, որ [փոխարենը] պահանջի էմիր Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարին, ում թաթարները գերի էին վերցրել Հալեպից, երբ գրավել էին այն ալ-Մալիք ալ-Նասիրից⁷⁷: Նրան տեղափոխել էին երկրի խորքերը և դրել թաթարների հրամանատարներից Սուլթան Զուլի ծառայության տակ: Սուլթանն առաջարկեց Սսի տիրոջն իր որդու փոխարեն հետ բերել նրան և վերադարձնել այն [բոլոր] բերդերը, որ խլել էր Հալեպի շրջանից: [Հեթումը] մեկ տարի ժամանակ խնդրեց՝ [մոնղոլական] արքունիք (al-Urdū) գնալու և նրա հարցով հետաքրքրվելու համար⁷⁸: Նա [նամակ] ուղարկեց՝ հաղորդելու, որ ինքն ընդունել է նրան ազատ արձակելու սուլթանի առաջարկը: [Այդ ժամ] սուլթանը հավաքեց էմիրներին և ասաց. «Օ՛ր, էմիրներ: Եթե ես գերի ընկնեմ, դուք ինչպե՞ս կվարվեք: Ասացին. «Մենք մեր փողերը կտանք և հոգիները սուլթանին ատելությունից պաշտպանելու համար»: Ձեզանից մեկը [վաղուց] գերի է ընկել, և նրա խուշդաշներն (hušdāšīyya) արդեն մոռացել են նրան: Բայց ես չեմ մոռացել. նա Շամս ալ-Դին Սունկուրն ալ-Աշկարն է: Սսի տերն ինձ փողեր և բերդեր է առաջարկել իր որդու դիմաց, բայց ես նրանից ոչինչ չեմ ուզել՝ բացի նրանից: [Արդեն] Սսի տիրոջ նամակն է եկել առ այն, որ գտել է նրան»⁷⁹: Էմիրներն օրհնեցին նրան, և իրավիճակն այդպես լուծվեց:

Սուլթանը Սսի տիրոջն ի պատասխան գրեց, որ հաստատում է, որ ուզում է վերադարձնել նրան: Հետո եկան Սսի ղեսպանները՝ բերելով Սունկուր ալ-Աշկարի նամակը՝ վերջինիս գաղտնագրերով և «նույնականացման նշաններով» (բնագրում՝ 'alā'im wa-amā'ir): Նրանք [փորձեցին] փոխել հանձնվելիք բերդերից մի քանիսի վերաբերյալ պայմա-

նաւորվածութիւնը: Սուլթանը նրանց պատասխանեց. «Եթէ դու այս կերպ դաժան ես վարվում քո որդու և զանիդ ժառանգորդի նկատմամբ, ես նույնքան դաժան կարող եմ գտնվել ընկերոջ նկատմամբ, որի հետ ոչ մի ազգակցական կապ էլ չունեմ: Ուստի դու ես քո տված խոսքից հետ կանգնել, ոչ ես: Մինչդեռ մենք հավատարիմ ենք մնացել մեր գրածին: Այնպես որ, վարվի՛ր Սունկուր ալ-Աշկարի հետ, ինչպես ուզում ես»⁸⁰: Երբ նրա ղեսպաններն այս նամակը տարան, սուլթանն արդեն Անտիոքում էր, ուստի նա (Հեթումը) վախեցավ և համաձայնեց սուլթանի բոլոր պահանջներին⁸¹: Հաշտութիւն կայացավ Բեհեսնա, Դարպսակ, Մարզուբան, Ռաբան, ալ-Ջարբ և Շիհ ալ-Հադիդ բերդերի հանձնման դիմաց, որոնք պետք է վերադարձվեին իրենց ամբարներով, ինչպես որ [մի ժամանակ] վերցվել էին: Համաձայնեցվեց, որ ազատ արձակվի Սունկուր ալ-Աշկարը, իսկ սուլթանն ազատ արձակի նրա որդուն, եղբոր-որդուն և [մյուս] ենթականերին: Նախքան բերդերի հանձնումը, պատանդ պիտի մնային Վասակը՝ արքայի եղբայրը, ինչպես նաև Ռայմունը (Ռայմոնդը)՝ Լևոնի կնոջ եղբայրը, իսկ գերիներից Վասիլը՝ Գունդստաբլի որդին, նույնպես պիտի նրանց հետ պատանդ մնար⁸²: Հաշտության պայմանագիրը ստորագրվեց Ռամադան ամսին Անտիոքում: Սուլթանն էմիր Սայֆ ալ-Դին Բալաբան ալ-Ռումի ալ-Դավադարին, ալ-Սադր Ֆաթհ ալ-Դին իբն ալ-Կայսարանին՝ արքունական գրագրին, հրամայեց գնալ և ներկա գտնվել արքայի երդմնակալությանը, և հենց այդ օրվա առավոտյան էլ նրանք ճանապարհ ընկան: Իսկ էմիր Բադր ալ-Դին Բաջբա ալ-Ռումիին Ռամադան ամսի 13-ին՝ կիրակի օրը, ուղարկվեց Եգիպտոսից արքա Լևոնին փոստաձիերով բերելու: Լևոնն էմիր Բադր ալ-Դին Բուջբա ալ-Ռումիի ուղեկցութեամբ Դամասկոս հասավ Ռամադան ամսի 26-ին (1268 թ. հունիսի 9)՝ երկուշաբթի օրվա⁸³ գիշերը, և լույսը բացվելուն պես, դուրս եկավ՝ սուլթանին հանդիպելու: Բադր ալ-Դին Բաջբային՝ Անտիոքից ճանապարհ ընկնելու և Դամասկոս հասնելու համար 13 օր պահանջվեց: Թաքֆուրը՝ Սսի տերը, [պայմանագրի վրա] երգվեց Ռամադան ամսի 17-ին (1268 թ. մայիսի 31), և հաշտութիւնը կայացավ:

Սսի ժողովուրդը, էմիր Սայֆ ալ-Դին ալ-Դավադարին տեսնելով, կարծեց, թե նա [մուսուլմանական] զորքի առաջապահ գնդերի հրա-

նատարն է, և նրանցից մի խումբ փախչելիս խեղդվեց գետում: Երբ սուլթանը Դամասկոս եկավ, նա լավ վերաբերվեց Սսի տիրոջ որդուն և նրան ամեն ինչով ապահովեց: Շավվալ ամսի 3-ին (Հունիսի 16) վերջինս՝ Հոտնկայա և գլխաբաց, երգվեց պայմանագրի այն օրինակի վրա, որի վրա նաև իր հայրն էր երգվել⁸⁴: Շավվալ ամսի 11-ին (Հունիսի 24) նա՝ Բադր ալ-Դին Բաջբայի ուղեկցությամբ փոստաձիերով ճամփա ընկավ և իր հոր թագավորությունը մտավ: Այնուհետև, էմիր Սալֆ ալ-Դին ալ-Դավադարն ուղղվեց Սիս՝ իրեն տրված հրամանները կատարելու: Երբ հասան հիշյալ պատանդները, նրանց համար պատրաստություն տեսան և պատվելի վերաբերմունքի արժանացրին: Այնուհետև, սուլթանի կառավարիչներն ընդունեցին բերդերը, և պատանդները վերադարձան՝ գոհ սուլթանի բարեհոգությունից:

Էմիր Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարի վերադարձի մասին

Երբ Սսի տիրոջ որդին ճանապարհ ընկավ⁸⁵ նրա մոտ, ազատ արձակվեց նաև Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարը: Սուլթանն այդ ժամանակ որսով էր զբաղված Զարուգում՝ մերձ Հոմսին: Երբ սուլթանը տեղեկացավ, որ նա մոտենում է, ծպտված ձի հեծնեց և դիմավորեց նրան, ապա նրա հետ արքունական վրան (al-dihlīz) մտավ և գիշերը նրա մոտ անցկացրեց: Երբ լույսը բացվեց, ենթակա մամլուքները հավաքվեցին, և սուլթանը դուրս եկավ՝ իր հետ բերելով Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարին: Նրան տեսնելով՝ մամլուքներն ապչեցին: Սուլթանը նրա համար փող, պատվո հանդերձներ, գոտիներ, նժույգներ, եզներ, ուղտեր և մամլուքներ նվիրաբերեց և ամեն ինչ, ինչի կարիքն ուներ: Էմիրները նույնպես ընծաներ մատուցեցին: Սուլթանը շատ բարեհոգի էր նրա նկատմամբ, առավել քան որևէ մեկն իր զավակի հանդեպ: Նա շարունակեց ծառայել նրան: Նրա համար [նույն-իսկ] տուն կառուցվեց Կահիրեի միջնաբերդում: Երբ Եգիպտոս հասավ, նա նրան էմիրություն աստիճան շնորհեց, և նա շարունակեց մնալ նրա մերձավորագույն [մամլուքներից] մեկը⁸⁶:

Երբ գրավվեց Կալ-Շակիֆը⁸⁷, Աքրայի ժողովուրդը կամեցավ, որ իրեն մի արքա իշխի, որը կբարեկամեր իր դրուժյունը: [Այդ ժամանակ] Կիպրոսում մանկահասակ թագավոր էր⁸⁸, ով խնամակալ ուներ և զորքերի հրամանատար՝ Աուք իբն Հինրի (Հենրիի որդի Հյու)⁸⁹ անունով, ով դեռ 30 տարեկան էլ չկար: Նա Տրիպոլիի տիրոջ հորեղբորորդին էր, ով իր հերթին քեռորդին էր Կիպրոսի տիրոջ՝ [այսինքն] մեր հիշած պատանու հոր: Այնպես պատահեց, որ պատանի [արքան] մահացավ: Այս պայլը խնամիական կապեր ուներ Արսուֆի տերերի հետ: Թագավորութունը ժառանգելու իրավունքն այս երիտասարդին էր պատկանում, ինչպես նաև նրա մորեղբորորդուն: Ընդ որում մորեղբորորդին գահաժառանգության ավելի մեծ իրավունք ուներ, քանի որ նրա մայրն ավագն էր: Ֆրանկների օրենքով գահը տրվում էր ավագագույն դստեր որդուն: Բայց քանի որ նա բացակա էր և գտնվում էր Սսի երկրում, Աքրայի Կիպրոսի գահին նստեց այս երիտասարդը, և ֆրանկները նրան հրավիրեցին նաև Աքրա: Աքրայի թագավորութունը կցվեց Կիպրոսյան թագավորությանը: Նա ժամանեց այնտեղ, և Աքրայի ժողովուրդն իր հավատարմությունը հայտնեց նրան⁹⁰:

Սուլթանի մեկնումն Անտիոքից

Երբ [սուլթանն] ավարտին հասցրեց գրավումը և բաշխեց ավարը, նա մեկնեց Անտիոքից դեպի Շայգար⁹¹, որտեղից էլ անապատով առանց Համայի տիրոջը տեղեկացնելու դեպի Հոմա՝ [այնտեղ] որսով զբաղվելու: Իսկ զորքերը հանգրվան առան Համայում, իսկ սուլթանը՝ [ընդամենը] երեք հոգու՝ էմիրներ Բադր Կալ-Դին Բայսարիի, Բադր Կալ-Դին Կալ-Նազիրի և Հուսամ Կալ-Դին Կալ-Դավադարի ուղեկցությամբ, գնաց Հոմսի փոխարքայի տուն: Նա Դամասկոս մտավ [հիշրայի 666 թ.] Ռամադան ամսի 26-ին (1268 թ. հունիսի 9)՝ իր հետ տանելով զբերիններին և իր ծառայության տակ ունենալով նաև Սսի տիրոջը: Նա Դամասկոսից դուրս եկավ սուլթան տարվա Զուլ Կադա ամսի 18-ին (1268 թ. հուլիսի 30), նշեց 'Իմն Ումմ Կալ-Բարիդայում,

որտեղ ալ-Մալիք ալ-Սաիդն էր նրան ընդառաջ դուրս եկել՝ դիմավորելու: Նրանք տոնը միասին նշեցին, որից հետո նա [Կահիրեի] միջնաբերդ մտավ Զուլ ալ-Հիջլա ամսի 11-ին (1268 թ. օգոստոսի 22) և փոխհատուցեց [իր գալստյան առթիվ] բերդի զարդարման համար [կատարված] ծախսերի արժեքը:

էջ 339

Աբաղայի որդի Հուլաղուի դեսպանի ժամանման մասին

Սաի տերը գրել էր սուլթանին՝ միջնորդ հանդես գալու սուլթանի և Հուլաղույան տան միջև հաշտության կայացման գործում⁹²: Նա նկատի ունեւր Սուէկուր ալ-Աշկարի երեխաների [վերադարձի] հարցը, և սուլթանին համոզում էր անձամբ նամակ գրել նրան (Աբաղային)՝ նրանց [վերադարձի] հարցով նրա հետ բանակցելու համար: Սուլթանն այս առնչությամբ էր գրել Թաքֆուրին, և ոչ թե այլ հարցով: [Այդժամ] Աբաղան իր կողմից դեսպան ուղարկեց, նրա հետ՝ յաուլա և ոսկե փայլա: Դեսպանը Թաքֆուրի հետ Սիս եկավ, և Թաքֆուրը [սուլթանից] խնդրեց մեկին, ով կդիմավորեր դեսպանին: [Այդ նպատակով] ուղարկվեց էմիր Նասիր ալ-Դին իբն Սայրամը՝ Հալեպի վերատեսուհը (mušidd Ḥalab), ով դիմավորեց նրան և հսկեց, որ նա [ճանապարհին] ոչ մեկի հետ չխոսի: Երբ սուլթանն իմացավ դեսպանի գալստյան մասին, ձի հեծնեց և էմիրների ուղեկցությամբ շարժվեց դեպի Դամասկոս՝ բեռներն Արսուֆում թողնելով: Դեսպանն արդեն ժամանել էր, բայց նրա համար [հանդիսավոր] ընդունելություն չկազմակերպվեց: Երբ դեսպանը սուլթանին հանդիպեց, ներողություն խնդրեց, որ [արդեն] իջել է ձիուց, հետո առանց կնիքի մի նամակ տվեց, որի բովանդակությունն այս էր. «Բարձրյալ Աստծո գործությամբ, Խանի նախախնամությամբ՝ Աբաղայի ֆերմանը՝ Քանի որ Թաքֆուրի միջոցով ուղարկված նամակները մեզ են ներկայացվել, սուլթան Ռուքն ալ-Դինը թող գիտենա, որ միայն Կուտուզն է, որ սպանել է իլխանի կողմից ուղարկված դեսպաններին, ինչպես նաև այն, որ արքաներ (իշխաններ) կան, որ միջնորդություն են խնդրում [Թաքֆուրից] մեր ենթակայության տակ անցնելու համար⁹³, և այժմ,

եթե իլիսանն ինձ պատիվ շնորհի, ես նրա ստորական կլինեմ: Լսել ենք [նաև], որ խնդրել ես մեզ մոտ գտնվող զփչաղներին: Նրանք են Սայֆ ալ-Դին Բալաբանը, Բադր ալ-Դին Բաքմաշը և Սայֆ ալ-Դին Սաքիզի որդիները: Կասկած չկա, թե ինչեր են եղել մեր միջև տարիներ շարունակ: Զջմարիտ է, որ մեր մեծ և փոքր եղբայրների միջև գոտուլթյուն է եղել: Բայց դրա պատճառով, մենք չենք կարող ձիավարել քո դեմ: Այժմ մենք մեր բոլոր եղբայրներով՝ ավագ և կրտսեր, կուռուլտայ ենք գումարել, և համաձայնություն եկել, որ չենք փոխի իմանի ֆիրմանն ու յասան: Դուք նույնպես ներկայացել եք և առաջարկել՝ կհպատակվեմք ձեզ և կտանք մեր ուժը: Մեզ համար հաճելի է Ձեր այդ [արարքը]: Ամբողջ աշխարհում՝ Արևելքից մինչև Արևմուտք, ով ընդունեց, հպատակվեց և մեր ծառայություն տակ մտավ, այդուհետ Ձինգիզ խանի ֆիրմանի և յասայի ենթակայություն տակ է լինում: Նա այժմ նույնպես իմանի ֆիրմանի և յասայի ենթակայություն տակ է: Եթե հայրը մեղք է գործում, դրա համար մեղավոր չէ որդին, իսկ եթե մեղանշում է եղբայրը, ապա նրան նրա կրտսեր եղբոր գործած մեղքի համար չեն բռնում: Եվ եթե մեղքը գործել է սուլթան Կուտուզը, ապա հենց ինքն է իր մեղքի պատասխանատուն: Դու պարտականություն ես վերցրել քեզ վրա, և եթե հավատարիմ ես մնացել քո տված խոսքին, այստեղ՝ մեզ մոտ, ուղարկիր քո եղբայրներից կամ որդիներից կամ քո ամենաընտիր էմիրներից, որ լսել տանք նրանց և հասկացնենք իմանի յաղիղն ու յասան: Նրանք քեզ մոտ կվերադառնան, և եթե համաձայնության գանք, մենք թույլ կտանք այն մարդկանց, որոնց դու մեզանից խնդրել ես, գալ: Բայց եթե չհետևես քո [տված] խոսքին, անհնազանդ լինես և սխալ մտածես, մենք էլ չգիտենք՝ ինչ կլինի: Միայն Ալլահը գիտի և իմանի նախախնամությունը:

Արդ, այսպես ենք հրամայել և ձեզ մոտ փոստաձեռնով ուղարկել այս երկու դեսպաններին՝ Բեք-Տութին և Աբու ալ-Ղարիբին»:

Նամակը գրված էր 667 թվականի Ռաբի երկրորդ ամսի քսանին (27 դեկտեմբերի 1268 թ.)՝ Բաղդադում, և այն չորս կարմիր կնիք ունի թերթակարերին:

Սրան պատասխան գրվեց սուլթանից, որի բովանդակությունն այս էր.

«Հանուն ողորմած և բարեգութ Աստծո,

Բարձրյալ Աստծո օգնությամբ և զորությամբ, մեծագույն սուլթան Բայբարս ալ-Սալիհի նախախնամությամբ: Թող արքա Աբաղան հասկանա, որ մենք Թաքֆուրին սոսկ կարգադրել ենք արքայի պատասխանն իմանալ Շամս ալ-Դին Սուլեյմուր ալ-Աշկարի հարցի առնչությամբ: Ինչ վերաբերում է ալ-Մալիք ալ-Մուզաֆֆարի (Ալլահը ողորմի նրան) կողմից դեսպանի սպանությունը, ապա քո դեսպաններին քեզ ենք վերադարձնում այնպես ողջ-առողջ, ինչպես որ եկել են: Այն բանի հիման վրա, ինչը որ էմիր Շամս ալ-Դին Սուլեյմուր ալ-Աշկարը հասկացրել է մեզ, մենք կարգադրել ենք Թաքֆուրին, որ միջնորդ հանդես գա մեր և նրանց միջև, ում համար, որ մենք խնդրում ենք: Բայց մենք [այդ մասին] ոչինչ չտեսանք: Իսկ ինչպե՞ս համաձայնություն լինի, եթե այն յասամ, որ մենք այսօր ունենք, ավելի զորավոր է Ջինգիս խանի յասայից: Ալլահը մեզ իշխանություն է տվել 40 արքաների վրա: Իսկ ինչ վերաբերում է նրա (իմա՝ Աբաղայի) այն պնդմանը, թե Արևելքից մինչև Արևմուտք հնազանդվում են նրան, ապա ի՞նչ պատահեց Քիթբուղա նոյինին, և ինչպես ոչնչացվեց նա: Իսկ դու, եթե հաստատ լինես քո խոսքում, որ տվել ես Սուլեյմուր ալ-Աշկարին, և եթե քո եղբայրներից կամ որդիներից կամ քո ավագագույն էմիրներից մեկին մեզ մոտ ուղարկես, մենք էլ նույնը կանենք, ինչպես որ ասել ես»: Նամակի վրա կնիքներ արվեցին՝ սուլթանի ինքնագրով, և դեսպաններին հետ ուղարկեցին:

էջ 350

Սսի երկրում տեղի ունեցած երկրաշարժի մասին

[Հիժրայի] 667 թ. Շաաբան ամսի 21-ին (1269 թ. ապրիլի 25) լուրեր հասան Սսի երկրում տեղի ունեցած երկրաշարժի և նրա բերքերի ավերման մասին, ինչպես օրինակ՝ Սարվանդիքարի և Հաջար Շաալանի: Այնքան շատ մարդ էր զոհվել, որ գետն արյունով էր հոսում, և քարուքանդ էին եղել մի շարք շրջաններ: [Այնուհետև] եկան Սսի դեսպանները և նույն կերպով հաղորդեցին [եղածի մասին]⁹⁴:

Աֆրայի վրա արշավանքի մասին

Այս տարում (Հիջրայի 668 թ.) արևմուտքի ֆրանկների մի խումբ Աքրա եկավ, որից ֆրանկները հրճվեցին: [Ապա] նավեր ժամանեցին՝ հայտնելով, որ Ռայդարքունն է (իմա՝ Արագոնի արքան, *Roi d'Aragon*, - Գ.Դ.)՝ Արևմուտքի արքաներից մեկն է գալիս իրենց մոտ իր զորախմբով: Այդ նավերով ժամանել էին նրա ուղեկիցներն ու մերձավորները: Նրա ղեականները ճանապարհվեցին Հուլավուի որդի Աբադայի մոտ՝ [հայտնելու], որ գալիս է նրա հետ դաշինք կնքելու: Նրանց ճանապարհներն անցնում էին Սսի [երկրի] կողմով: Սակայն Ալլահը փոթորկոտ քամիներ ուղարկեց և կործանեց նրա նավերի մի մասը, որից հետո նրա մասին այլևս նորոթյուն չլսվեց⁹⁵:

Սսի տիրոջ մահվան մասին

Նրա անունը *al-Malik al-muğīr*.⁹⁶ Հայթում իբն Կոստանդին էր: Նրա մահը⁹⁷ [Հիջրայի 669 թ.] Ռաբի առաջին ամսի 21-ին էր (1270 թ. նոյեմբերի 7)⁹⁸:

[Հիջրայի 670 թ. Ռաբի երկրորդ ամսին] (1271 թ. նոյեմբեր) սուլթանն իր զորքերով Հալեպ ուղղվեց: Նա Շամա ալ-Դին Ուսթադ-Դարին⁹⁹ և մի խումբ բեդվինների ուղարկեց Մարաշի դեմ, իսկ ալ-Հաջջ Տալբարս ալ-Վազիրին¹⁰⁰ և Իսա իբն Մուհաննային¹⁰¹՝ Հարրան (Խառան) և ալ-Ռուհա (իմա՝ Ուռհա, Եդեսիա): Նա ողջ գիշերը ճիու վրա մնաց՝ մինչև որ պատրաստեց նրանց՝ հրահանգելով կրակակիրներին¹⁰² և հետախույզներին: Ալ-Հաջջ Տալբարսը Հարրան հասավ և սպանեց այնտեղ եղած թաթարներին¹⁰³:

Քայնութի¹⁰⁴ գրավման մասին

Շատացել էին Քայնուք բերդի բնակչության չարագործություններն ու թշնամանքը վաճառականների և հետախույզների նկատմամբ: Այդ մասին գրեցին Սսի տիրոջը, բայց նամակագրությունն օգուտ չբերեց: Հայերը սարակույզներ էին հագնում և քարավաններ կտրում: [Սուլթանն] էմիր Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբեին՝ Հալեպի գորապետին, ուղարկեց Քայնուքի վրա: Վերջինս [այնտեղ] հասավ [հիջրայի 672 թ.] Մուհարրամ ամսի 3-ին (1273 թ. հուլիսի 20) և գրավեց բերդի մերձակայքը: Հայերը մտան միջնաբերդը, և մուսուլմանները նրանց դեմ կռիվ տվեցին: Նրանք գրավեցին միջնաբերդը, սպանեցին տղամարդկանց, կանանց գերի վերցրեցին: Զորքը հարձակումներ գործեց Տարսուսի (sic)¹⁰⁵ կողմերի վրա՝ կողոպտելով և գերեվարելով¹⁰⁶:

Վարքագրության հեղինակն ասում է (Իբն Աբդ ալ-Չահիրը նկատի ունի ինքն իրեն). «Այս Քայնութը նույն al-Ḥadaṭ al-ḥamrā-ն է, որ կառուցել է Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանը¹⁰⁷: Նրա Քայնուք անվանումը «հրկիզված» է նշանակում: Սուլթան իշխող պալը՝ Կոստանդին¹⁰⁸ անունով, ով Սսի այժման տիրոջ պապն էր, գրավել էր այն սելջուկյան Ռումից և կրակի տվել: Հենց նրա կառուցման մասին է, որ ալ-Մութանաբբին ասել է իր մի կասիդայում՝ գովերգելով Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանին: Այն [այսպես] է սկսվում.

«Լուրջ վեճերը կարևոր մարդկանց ունակությունն են:

Արդյո՞ք al-Ḥadaṭ al-ḥamrā-ն գիտի, թե ինչ գույն ունի,

Կամ միթե՞ գիտի, թե ինչ [հեղուկ] են ցողում ամպերը.

Մինչ նրա գալը նեփ ամպերն էին [անձրև] տեղացել,

Իսկ երբ մոտ եկավ, ծածկվեց [անթիվ] գանգերի [արյամբ]:

Նա շինեց այն վեճ, այնինչ նիզակն էր նիզակի բախվում,

Իսկ շուրջը մահվան կոհակներն էին զարնվում իրար:

Այնտեղ առկա էր մի ինչ-որ [զգացում] խելագարության,

Շուրջը հմայիլներ՝ [անհարկու] սպանդից ընկած դիերից:

Քշված էր այն ինչպես վտարանդին դարի, բայց բո նիզակով

Հետ բերեցիր այն հանուն կրոնի՝ հակառակ դարի»¹⁰⁹:

Նրա մասին հայտնի է, որ Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանն է սկսել կառուցել այն: [Հիջրայի] 337 թվականին (948 / 949 թ.) բերդի բնակիչներն անվտանգության երաշխիքով այն հանձնել էին ալ-Դոմեստիկին՝ հռոմ քրիստոնյաների արքային: Սակայն [Հիջրայի] 343 թվականի Զումադա ալ-ախիրա [ամսի] 12-ին՝ չորեքշաբթի օրը (954 թ. հոկտեմբերի 3), Սայֆ ալ-Դաուլան պաշարել է այն և նրա հիմքը գցել մեկ օրվա ընթացքում՝ առաջինը հենց իր ձեռքով փորելով հիմքը: Նա այնտեղ մնաց այնքան ժամանակ, մինչև նրա շինարարությունն ավարտին չհասցրեց՝ Ռաջաբ ամսի 13-ին՝ երեքշաբթի օրը (954 թ. նոյեմբերի 12)¹¹⁰:

էջ 418

Թե ինչ գործերով զբաղվեց սուլթանն այս ընթացքում

Դրանցից էր Զալալ ալ-Դին ինորեզմաշահի¹¹¹ amīr-ṭast (բառացի՝ «սափոր բռնող») ալ-Մալիք ալ-Ֆարրիհի որդի ալ-Մալիք Շամս ալ-Դին Բահադուրի հարցը:

Հիշյալ Շամս ալ-Դին Բահադուրը Շումայսատի (իմա՝ Սամոսատ) արքան էր: Նրա հայրը Զալալ ալ-Դին ինորեզմաշահի amīr-ṭast ալ-Մալիք ալ-Ֆարրիհն էր, ով Զալալ ալ-Դինից հետո տիրում էր Քիրանին և ևս վեց բերդերի՝ Նակջավանի (Նախճավանի) կողմերում: Նրա հայրը Ռում էր եկել և որպես ռազմավատ (iqṭāʿ) ստացել Ակսարան: [Մի օր] այնպես պատահեց, որ այս Շամս ալ-Դին Բահադուրը, երբ Շումայսատում էր, գրեց սուլթանին և նամակագրություն հաստատեց նրա հետ: Նա մտերմացավ նրա հետ՝ ատելի թշնամու¹¹² մասին ստույգ հաղորդումներ տալով: Սա տեղի ունեցավ [Հիջրայի] 671 թ. (1272/1273 թ.): Նա իր կողմից սուլթանի մոտ մի մամլուքի ուղարկեց՝ նրանից հավաստիացումներ ստանալու համար: Սուլթանը համաձայնեց նրա հետ մի յուրահատուկ հնարք բանեցնել քրիստոնյա կաթողիկոսի նկատմամբ, ով նեղացրել էր Բաղդադի մուսուլմաններին, բնակություն հաստատել խալիֆաների կացարաններում (իմա՝ դղյակներում), փչացրել մուսուլմանների գործերը: Նրա վատահամբավ արարքներն այնքան շատ են հիշատակելու համար:

Ուստի սուլթանն այս կաթողիկոսին մի նամակ գրեց, որի բովանդակությունը սա էր. «Մենք ընդունում ենք քո հոգածությունն ու առաջարկություններն այն քրիստոնյաների վերաբերյալ, որ մեր երկրում են: Եվ հանուն քեզ է, որ հարգանքով ենք վերաբերվում նրանց: Մենք ընդունում ենք [նաև] մոնղոլների վերաբերյալ այն գաղտնի տեղեկությունները, որ տրամադրել ես մեզ»: Նամակում հիշվում էին որոշ հորինածին և իրականության հետ կապ չունեցող պարագաներ, ինչպես օրինակ. «Մենք համաձայն ենք այն մեկի [թեկնածուությանը], ում համար դու միջնորդել էիր՝ [նրա անունը] մատնանշելով, երգվում ենք հանձնել քո նշած վայրերի շինություններն այն մեկին, ում ինքդ ես առաջարկել: [Ստացել ենք նաև] այն դեղամիջոցը, որի օգտագործման նպատակի շուրջ և թե ում համար այն պետք է ջանանք օգտագործել, [արդեն] պայմանավորվել ենք: Թող Ալլահը հնարավոր դարձնի այդ: Ուղարկում ենք նաև քո խնդրած բալասանի յուղը և [ջուր] քրիստոնեական ջրհորներից, ինչպես նաև մի կտոր խաչելուծյան խաչից: Այս ամբողջը մենք ուղարկել ենք ալ-Ռահբա և այնտեղի կառավարչին տվել նաև այն գաղտնաբառը, որը որոշել ենք: Ուստի քեզ համար վստահելի մեկին ուղարկիր գաղտնաբառով՝ այն ստանալու»: [Այնուհետև] սուլթանն այս «գաղտնի նամակը» (mullaṭṭaf) ուղարկեց ալ-Բիրայի կառավարչին՝ ասելով. «Մի հայի ուղարկիր՝ սա կաթողիկոսին հասցնելու: Հենց որ ուղարկես, այդ մասին տեղեկացրու Բահադուր աբային»: Երբ գործը գլուխ եկավ, Բահադուրն ուղարկեց մեկին, որ կանգնի [հայ] բանագնացի (բնագրում qāṣid է, իմա՝ հետախույզ)¹¹³ ճանապարհին: Նա բռնեց նրան և գաղտնի նամակի հետ տարավ Հուլաղուի որդի Աբաղայի մոտ՝ ասելով. «Այս կաթողիկոսը, ում [այդքան] վստահում էիր, այս կերպ է պատասխանում քո վստահությանը»: Երբ գաղտնի նամակը [Աբաղային] հասավ, այն պատճառ դարձավ կաթողիկոսի մահվան¹¹⁴:

Շումայաստի տերը մտերմացավ սուլթանի հետ՝ բազմաթիվ այսպիսի գործեր կատարելով: Սակայն թշնամին հասկացավ, բայց միայն այն բանից հետո, երբ արդեն իրականացրել էր իր անելիքը և իր նպատակին հասցրել: Նրան բռնեցին և Ուրդու տարան: Նա ենթակաների և մամուլքների հետ փախուստի դիմեց և ապաստան գտավ սուլթանի մոտ: Նրա մամուլքների և ռազմիկների թիվն անցնում էր

երկու հազարից, որոնց սուլթանը հարգանքի արժանացրեց և կոչումներ շնորհեց: Ինչ վերաբերում է Շամս ալ-Դին Բահադուրին, ապա վերջինս նույնպես [հաջողացրեց] ճողոպրել թշնամուց և փրկվել: Նա ալ-Բիրա հասավ, որի կայազորը դիմավորեց նրան և ուղարկեց սուլթանի մոտ: Ասում էին, որ նա յոթ օր առանց մի բան ուտելու էր մնացել: Երբ ժամանեց, սուլթանը դիմավորեց նրան և Եգիպտոսում ռազմավատներ շնորհեց՝ լավ վերաբերմունքի արժանացնելով¹¹⁵:

էջ 431

[Մուսուլմանական գործերի] հառձակումը Մարաշի վրա

Այս տարում Հալեպի գործը՝ էմիր Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբիի գլխավորությամբ, շարժվեց Մարաշի կողմը և հարձակվեց Սսի երկրի վրա: Նրանք մեծ քանակությամբ ավար վերցրին, քանդելով հանեցին Մարաշի արվարձանի դարպասները: Ռաբիա իբն ալ-Տահիր իբն Ղան-նամը խեղդվեց այնտեղ գետանցման ժամանակ¹¹⁶:

էջ 432

Սսի արշավանքը (1275 թ.)¹¹⁷

Սսի տերը դադարել էր ուղարկել իր վրա դրված նվերները, ինչպես նաև խախտել էր գինադագարի այն պահանջը, ըստ որի նա չէր կարող վերակառուցել ոչ մի շինություն և ոչ էլ բերդ ամրացնել¹¹⁸: Նա դադարել էր նաև հավաստի տեղեկություններ հաղորդել, որի պարտավորությունը ստանձնել էր համաձայն իր երդման: Բանն այն է, որ հայերը սարակուջ էին հագնում և դրանցով վախեցնում քարավաններին՝ հայտարարելով, թե իրենք [մոնղոլ] խանի զորքերն են: Վաճառականները հատկապես մեծ չարչարանքներ էին կրել Քայնուքի կողմից, ուստի սուլթանն ուղարկել էր Քայնուքն ավերելու, ինչպես որ արդեն հիշատակել ենք: Սրանից Սսի տերը [չատ] նեղսրտեց, ուստի նրան ասվեց. «Դա քո ձեռքի գործի հետևանքն էր, ակն ընդ ական (բնագրում՝ wāhida bi-wāḥidat ġazāʾ, իմա՝ «մեկը մեկի է բաժանվում»)»: Սուլթանը [գեսպան] ուղարկեց՝ հայտնելու նրան, որ շարժ-

վում է Սսի դեմ: Սսի տերը [նաև] մտերմացնում էր ֆրանկներին թաթարների հետ¹¹⁹ և նվաստացնում մուսուլմաններին նրանց աչքերում: [Օրինակ, մի օր] այնպես պատահեց, որ Ռուսից թուրքմեն առևտրականներ էին գալիս՝ ձիերով և գոմեշներով, և Քայնուքի բնակիչները նրանց վրա հարձակվեցին: [Թուրքմեններն] ասել էին, որ այդ ձիերը սուլթանի համար են տանում, բայց [հայերը] նրանց սպանել էին¹²⁰:

Երբ շատացան երկրին և նրա հպատակներին [Սսի տիրոջ] հակագործունեության դեպքերն ու հասցրած վնասները, սովորական դարձան [սուլթանության] տարածքներում նրա արատավոր արարքները,  իսկ Ալլահը չի սիրում արատավորությունը¹²¹ , սուլթանին տիրեց իր ժողովուրդին պաշտպանելու արժանապատվության [զգացումը], նրա նկատմամբ սուլթանի սրտում եղած խղճահարույթյունը վրեժխնդրության վերածվեց, հաշտությանը պայքար դարձավ, խաղաղությանը՝ հակամարտությանը, զինադադարը՝ պատերազմ¹²²: Սակայն նա ծածուկ պահեց իր նպատակը և ոչ ոքի չհայտնեց¹²³: Միայն ցույց տվեց, թե շարժը դեպի Ասորիք էր ուղղված: Նա որոշեց ստուգատեսի ենթարկել իր ամբողջ այրուծին իր միջնաբերդի մատուցյաներում մեկ օրվա ընթացքում: Սուլթանը, ինչպես և նրա մամուլները հագան [իրենց ասպազները]՝ զրահներն ու ոսկյա սաղավարտները, և սուլթանն անձանաչելի դարձավ նրանց շարքերում: Նա սկսեց գունդ առ գունդ անցնել նրանց միջով և ստուգել: Նրանք ճամփա բռնեցին և ճամբար խփեցին Bāb al-naṣr-ի¹²⁴ մոտ: Սուլթանը պահանջեց [պարզել], թե արդյոք նրանց թվում կան [ռազմիկներ], որոնց սպառազինությունը թերի էր, այն է՝ օղազրահները չունեին կոնքակալներ և բազկակալներ, և տվեց նրանց այն ամենն, ինչ անհրաժեշտ էր զրահն ամբողջացնելու համար:

Նա դուրս եկավ սուլյն տարվա (իմա՝ հիջրայի 673 թ.) Շաբան ամսի 3-ին (1275 թ. փետրվարի 1) և Դամասկոս հասավ Շաբանի վերջերին (փետրվարի վերջեր)՝ մի օր, երբ գետինը ձյան զգեստ էր հագել¹²⁵: «Բացվեց երկինքը և դարպասներ դարձավ», և Ասորիքի զորքը [նույնպես] դուրս եկավ՝ [իր զենքուզրահը] հագած-կապած: Սուլթանն [այնտեղից] դուրս եկավ Ռամադանի 7-ին (մարտի 6), և երբ Համա հասավ, դուրս եկավ ալ-Մալիք ալ-Մանսուրը՝ Համայի տերը,

իր գործերով նրան միանալու¹²⁶։ Սուլթանը ծպտված էր, և Համայի տերը չնկատեց, որ նա ձիավարում էր իրեն ենթակա շքազնդում, որպես իր տարածքում նրա կողմից ցուցաբերված հարգանքի նշան։ [Այա] սուլթանն առաջ ընթացավ՝ իր տրամադրություն տակ ունենալով ամբողջ գործը և բոլոր բեդվիդներին։ Նա [կրկին] ստուգեց նրան, և նրանցից Իբն Խալիմ (Իմա՝ Իսա իբն Մուհամմադին) և Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբիին ուղարկեց ալ-Բիրայի կողմը՝ որպես հաղթական գործի առաջապահ գնդեր։ Նրանք այնտեղ հասան։ Իսկ սուլթանը, երբ Նայրաբ Սարմին հասավ, բեռներն ու գործի մի մասն այնտեղ թողեց՝ էմիր Շամս ալ-Դին Սուլեյլու-Ջահ ալ-Ջահիրի¹²⁷ ուղեկցությամբ, իսկ ինքը չընկացավ Դարպասի կողմը։ էմիր Իզզ ալ-Դին ալ-Աֆրամ ամիրջանդարին¹²⁸ և Մուբարիզ ալ-Դին ալ-Տուրիին ուղարկեց al-Nahr al-aswad-ի («Սև գետ», այժմ՝ Կարա-սու) փերը հարթեցնելու։ Զորքը մեծ դժվարությամբ կտրեց-անցավ այն։ Սուլթանն այնքան ժամանակ կանգնած մնաց, մինչև գործի մեծամասնությունն անցավ գետը։ Նա ճամբար խփեց Դարպասի և Բաղրասի միջև՝ հրամայելով մի խումբ հազարապետ [էմիրներ], որ յուրաքանչյուրը մի ուղղությամբ առաջ ընթանա։ Նրանք մագլցեցին լեռները։ Սուլթանը հրամայեց մոմեր վառել, և մարդիկ մղվեցին դեպի լեռները։ Ոչ ոք անգամ ճանապարհը չհարցրեց՝ ուշադրություն չդարձնելով նրա նեղությանը։ Այլ առաջ ընթացան՝ իրենց վրա տանելով երկաթյա պսպղուն ապառաժներ, լեռների վրա նժույգների սմբակների օձագալար [հետագծով]։

☉ Երբ կգա ժամն Իրադարձության,
Նրա գալուստը հերժող չի լինի,
Կիջեցնի [ոմանց], վեր կհանի [այլոց]։
Եվ կսասանվի հողը ցնցումով,
Ու կտապալվեն ապառաժները
Փլատակների, փռչի կղաղման¹²⁹։ ☉

Իսկ հաղթական զորագնդերը նման էին ալ-Բուհարիի նկարագրածին (բնագրում՝ «Ինչպես ալ-Բուհարին է ասել»)։

«Մեր [ունեին], որ բոլոր ոստիների կյանքի վախճանն են,
Եվ ձիեր, որոնք կողոպուտն էին տների նրանց։
Երբ մագլցեցին Բաղրասի վրա, լցվեցին նրանց

Սրտերը թափում [մի զգացումով], երբ կիրճը մտան.

Իսկ ժողովուրդը, որ լուցանել էր կրակն ընդվզման, չէր էլ կասկածում,
Որ դու կզնաս և կհանգցնես կրակն իր [վառած]»¹³⁰:

Սուլթանն իր հետ 30 նավակ էր վերցրել գետանցման նպատակով: Սուլթանը ճամբար խփեց Իսֆանդարունի կապանում՝ այն պարսպի տակ, որ պայլ Հեթումը՝ Սսի տեր Լևոնի հայրն էր կառուցել: Այնուհետև հեռացավ դեպի ալ-Մուսակկաթ, և զորքը գրավեց Մսիսի կամուրջը¹³¹ և հենց Մսիսը՝ տիրանալով ամեն ինչին, ինչ գտավ, և սպանելով բոլոր նրանց, ում գտավ այնտեղ: Մամլուքներն անչափելի քանակությամբ գոմշացուլներ, կովեր ու ոչխարներ ավար վերցրին: Նրան իրենց հնազանդությունը հայտնելու եկան մեծ թվով թուրքմեններ, բեդվիդներ՝ իրենց անասունների հոտերով և ձիերով, որոնք բոլորը պատրաստել տվեց, որ երկիր (իմա՝ Սուլթանություն) ուղարկվեն¹³²:

Նա զորակարգով առաջ ընթացավ Ռամադանի 29-ին (մարտի 28) և Սիս հասավ¹³³, բայց չըջանցեց այն, թուլացրեց [նժույգների] սանձերը՝ հետազոտելու, թե բարձրագույն վայրերում, ովքեր կան [թաքնված]: Նա հասավ մինչև Darband Rūm (իմա՝ «Դրանմ Կիրիկի»), որտեղ գտան և գերեվարեցին թաթարների երեխաների և նրանց կանանց մի մասին: Սուլթանը վերադարձավ և գիշերեց այդ բարձր լեռներում՝ ձայն տալով նրանց իր ձիերի սմբակներով, որ լսում էին՝ չնայած խուլ լինելուն: Նա Դժ-ն անցկացրեց Սիս քաղաքում, որ Հայոց թագավորության աթոռն էր՝ անախորժ գործերի ակունքը: Այնտեղ էին գտնվում նրա իշխողի այգեստանն ու [ապարանքների] գիտանոցները, որ ապշեցնում էին նայողին և [մոսուլման] հավատացյալին վստահեցնում, թե անհավատի եղբան են: Սուլթանն իջևանեց նրա կացարանում, որն առավոտյան խաթարվեց, որտեղ որ այգի էր, ամառի հող դարձավ, իսկ թուռուները, որ [սովոր էին] ճովողել այնտեղ, սկսեցին սգալ, նրա առվակները (բառացի՝ «հոսող ջրեր») ասես նրա թափած արցունքը դարձան, եկեղեցիները սրբվեցին [գետնի երեսից], տեսարժան շինությունները ջնջվեցին: Սիս քաղաքը կողոպտվեց, ավերվեց և հրկիզվեց: Նրա բնակչությունն ամրացավ միջնաբերդում¹³⁴: Այս ամբողջ ընթացքում անընդհատ փոստային նամակներ էին գալիս [հայտնելու], թե ինչ վայրերում է եղել սուլթանը:

Երբ սուլթանն ազատվեց Սիս քաղաքի հրկիզումից, Թաքֆուրի դղյակները քանդելուց, նրա դիտանոցների համայնապատկերը խաթարելուց և նրան հեղինակազրկելուց (բառացի՝ «նրա վարագույրները պատռելուց»), վերադարձան առաջապահ զնդերն իրենց վերցրած ավարով՝ մոնղոլ կանանց և երեխաների հետ մեկտեղ՝ մթին գիշերվա քողով պարտակված (բառացի՝ «ինչպես մթին գիշերվա մասնիկներ»):

Երբ զինվորներն սկսեցին արածեցնել [իրենց ձիերին] հանդերուժ, Տարսոն (բնագրում՝ սխալմամբ Տարսուս է) հասան էմիրներ Զամալ ալ-Դին ալ-Մուհամմադին և Իզզ ալ-Դին ալ-Դամյատին և այնտեղ մոտ 300 զուլա ձիեր և գոմեշներ գտան և իրենց հետ քշելով տարան¹³⁵: Իսկ Մուբարիզ ալ-Դին ալ-Տուրին և Իզզ ալ-Դին Քուրջին ուղղվեցին դեպի ծովափնյա շրջաններ՝ ճանապարհին սպանելով մի խումբ թշնամիների: Նրանք նավեր գտան ծովում, տախտակամած ելան և զրավեցին՝ սրախողխող անելով նրանցում եղած մարդկանց: Իսկ էմիր Սայֆ ալ-Դին ալ-Զինին հասավ մինչև ալ-Բարգին բերդ (Բարձրաբե՞րդ), էմիր Բադր ալ-Դին ալ-Ալդամուրին՝ Ադանա՝ գերեզմանավայրի կանանց և մանուկներին: Զորքերն ասպատակ սփռեցին նաև այդ լեռներում՝ բազմաթիվ հետևակայիների սրի քաշելով¹³⁶: Ասորիքյան զորքերը մի խումբ ֆրանկների և հայերի գտան և մեռցրին բոլորին: Էմիրներ Բադր ալ-Դին Բայասարին և Սայֆ ալ-Դին Ալթամուշ ալ-Սաադին հասան Այաս, բայց նրանք ֆրանկների միջոցով արդեն ստացել էին [մուսուլմանական] զորքերի գալստյան լուրը և իրենց հարստությունները նավերի վրա էին տեղափոխել: Զորքերը հրդեհեցին և սրածեցին շատերին ինչպես ցամաքում, այնպես էլ ծովում: Այս բանից հետո ստացվեց Իսթանդարունայի կառավարչի նամակն այն բովանդակությամբ, որ [մուսուլմանական] զորքերի՝ Այասի վրա արշավելուց հետո մի խումբ ֆրանկներ և հայեր՝ թվով մոտ 2000 հոգի, նավ են նստել՝ փախուստի դիմելու նպատակով, բայց բոլորն էլ խեղդվել են [ծովում]¹³⁷: Ուստի նայի՛ր այս սուլթանի երջանկությանը, թե ինչպես [նույնիսկ] ծովերը չեն փրկում նրա թշնամուն, և ոչ էլ անապատներն են սքողում նրանց երթևեկը:

«Նա, ով չի ընկել սրի [հարվածից], կմեռնի այլ կերպ»:

Էմիր Բադր ալ-Դին ամիր-սիլահը բռնագրավեց անիծյալներին արածող ձիերը: Սա է, ինչ վերաբերում է Սսի արշավանքին: Ինչ վերաբերում էր ալ-Բիրա ուղևորված զորքերին և բեդվիններին, ապա նրան Ռաս ալ-Այն հասան և հարուստ ավար վերցրին: Սարսափը թաթարների մեջ մտավ, ովքեր պարտված նահանջեցին: Սուլթանը սրանով նպատակ ուներ [տպավորություն] ստեղծել, թե այդ ուղղությամբ է պատրաստվում գործել: Զորքը վերադարձավ ողջ-առողջ և հաղթանակած:

Սուլթանը Մսիս հասավ և այն երկու կողմից կրակի տվեց: Եվ երբ դարձան էմիրները [իրենց վերցրած] ավարով և [սուլթանին] իրենց հավատարմությունը հայտնած թուրքմեններն ու բեդվինները դուրս եկան կապաններից, սուլթանը ճանապարհ ընկավ: Նա անցավ մի լճի կողքով, որում աճող ծառեր կային՝ այն անտառի նմանեցնելով: Այն կղզյակներ ուներ, որոնց վրա ամրացել էին մի խումբ տեղացիներ՝ իրենց հետ վերցնելով իրենց կանանց և կարողությունը: Զինվորներն իրենց նետեցին [լիճը]՝ լողալով ձիերի վրա և նրանցից շատերին սպանեցին և գերեվարեցին: Այնուհետև անցան թեղ Համդուն և ալ-Նուկեյրա (իմա՝ Նդիր) բերդ, որտեղ զորքերը համատարած ավեր սփռեցին: [Ապա] դուրս եկավ կապաններից և տեսավ, որ մարգագետինները ծայրեծայր լցվել են ավարով: Նա անձամբ կանգ առավ՝ ավարը բաշխելու, որ հազարներով չէիր հաշվի: Չմոռացավ նրանցից և ոչ մեկին՝ [անգամ] ոչ մի դրոշակակրի և ոչ մի գրագրի, իսկ իր համար այդ [ամբողջ] ավարից ոչ մի բան չվերցրեց: Բաշխելուց հետո օթևան առավ Հարիմի մոտ խփված [սուլթանական] վրանում (բնագրում՝ dihliz): Վարքագրության հեղինակն այդ մասին [այս տողերն] է հյուսել:

«Օ՛ր, տեղ [այս] երկրի, քո որոշումը պատճառը դարձավ

Անհավատների քանի՞ շինության ավերածության.

Գլխիվայր շրջվեց Սիսը, տակնուվրա եղավ,

Թեկուզև մարդիկ ասում էին՝ անշրջելի է»:

Ասել է նաև.

«Ի՛նչ օր էր, որ մեզ նվիրեց իր հաղթանակը,

Ալլահն այդ [պարգևով] մեր աչքը գոհացրեց:

Այն օրը, երբ անցանք Սսի երկիր, ասացինք՝
 Ի՞նչ հաղթանակ է մեզ Տերը շնորհել:
 Հայտնվեց սուրբանն աստղաբույլի մեջ
 Թյուրքերի զարմի, որ մահն են սիրում:
 Զիավարում են հաղթության վարգով
 Ազնվատոհմիկ այդ վագորդներին¹³⁸,
 Որն աշխետ՝ նման պատվական գինու,
 Որը դեղնագույն՝ ոսկու պես [իրեն] նայողին թովող:
 Երիվարներ՝ սև և [կամ] մոխրագույն՝
 Հանց գիշեր [մթար] կամ պարզ վաղորդայն:
 Աշխետներ, որոնց վագֆից [սրընթաց]
 Մեռած են թվում ձիավորները:
 Իրենց [քամբերին] տանում են ուզմի որդիներին [ֆաջ],
 Որ գոհունակ են եղել մշտապես իրենց Տիրոջը:
 Քանի՜ հերոսի ստորագրին նրանք ալան-թալանով, գերեվարությամբ
 Եվ հաղթանակով, նրանց հավասար ֆանի՛-ֆանիսի՛ն հզորացրին:
 Առան ֆաղաֆներն ու բերդամրոցները, վանեցին տեղի
 Անհավատներին՝ հանձնելով [դրանք] մուսուլմաններին՝
 Ուժով վեհապետներից վսեմագույնի, ով բերդ է
 Դարձել մուսուլմանների համար ամրակոտ:
 Բայբասը՝ Աստծո կրոնի սյունը, ալ-Զահիրը, որ
 Լավագույն է աշխարհի և [թե] կրոնի արֆանների մեջ:
 Իրական առյուծն Ալլահի, ում պարզեց է
 Այն գործությունը, որից անպաշտպան են բռնապետները:
 Լևոնը հոգնած փախավ նրանից՝
 Վհատ, ահաբեկ, անիծված, նվաստ:
 Նույնպես և թաթարները վախից-սարսափից
 Նրա գործության փախուստ տվեցին:
 Ա՛խ, թե մնային և հարցնեին,
 Թե այդ որ օրվա [դժխետ] չարիքին մենք արժանացանք:
 Զորերի մասին զգուշացրեցին Աբաղային, ով
 Փախուստ տվեց՝ լրաբերների լուրը չստուգած:
 Երկրներն իրար վրա նետվեցին՝ ասելով.

Եթե լինենիմ մենմ Սսի նման, կասպատակվեիմ,
 Թե մեզ [էլ] հասներ գորբը սուլթանի,
 Ես էլ ոտնատակ պիտի լինեի ձիերից նրա:
 Թե ես լինեի նրա իշխանության տակ և փրկագինը
 Ողջ կարողությունն [իմ] ժողովրդի մեզ հետ կկորեր:
 Եթե սուլթանը զար մեզ մոտ՝ տեսնելու,
 Թե հնազանդ ենմ մենմ եղել նրան:
 Երենկ թե [հենց] մենմ կարողանայիմ գնալ նրա մոտ,
 Սակայն մենմ մեկն ենմ ժամանողներից:
 Թող որ Ալլահը երկարացնի նրա կյանքը
 Եվ բոլոր արարածներին փրկագին դարձնի»:

Ասեւ է նաև.

«Օ՛, դժբախտություն Սսի, որ կողոպտվեցիր,
 Այդ ֆանի՛ անգամ խաթարվեց հոսքը [ֆո] առվակների,
 Այնքան նեղացան ճանապարհներդ, որ խանգարում է
 Անասնահոտին [նույնիսկ] հետիոտունը»:

Իսկ նախկինում՝ Թաքֆուրի հետ զինադադար կնքելիս, սա էր հորինել.

«Մեր սուլթանը սոսկ զինադադար է տվել հայերին՝
 Նվաստացնելու նկատառումով.
 Մինչև շատանա հարստությունը նրանց իր համար,
 Մրաշեղբերի համար բազմաման գավակները նրանց»¹³⁹:

Թե ինչ է հայտնի պատմությունից Սսի երկրի մասին Ալ-Մասիսա (Մսիս).

*Ըստ Իբն Ասաքիրի իր «Մեծ պատմության» մեջ եղած վկայություն՝
 այն կառուցել է Աբդ ալ-Մալիք իբն Մրվանն իր հոր կառավարման
 օրոք՝ մարգարեական հիշրայի 84 թվականին (703 / 704 թ.): Նա Հո-
 ռոմների երկիր է արչավել 83 և 84 թվականներին, իսկ կառուցմանը
 ձեռնամուխ է եղել [8]4 թվականին:*

Ինչ վերաբերում է Տարսուին (Տարսունին).

Հնագույն քաղաքներից մեկն է, որի դարպասին, ինչպես ինձ են ասել, այժմ [դեռ] գրված է այն կառուցողի անունը: Այդ մասին ալ-Տաբարին է հիշատակել: Այնտեղ է գտնվում ալ-Մամուն Աբդալլահ իբն Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի գերեզմանը, որովհետև նա բազմիցս՝ մեկը մյուսի հետևից արչավանքներ է ձեռնարկել նրա վրա և մահացել Տարսոնին մերձ մի վայրում՝ ալ-Բադանդուն (Պոտանդոն) անունով, [հիջրայի] 218 թվականին (833/834 թ.): Նա թաղվել է Տարսոնում՝ Խաքան Սպասավորի տանը: Նրա գերեզմանն այժմ հայտնի է այնտեղ: Մսիսը հայտնի է նաև Այն Ջարբա անունով (sic), Տարսոնն ու Ադանան՝ իրենց հարակից շրջաններով, Կիլիկիայի և անվանվում: Մսիսը [Ա]բկարատ (իմա՝ Հիպոկրատ) [անունով] բժշկի ծննդավայրն էր (ակնհայտ սխալ է-Գ.Դ.), իսկ ոմանք ասում են, թե Հոման էր:

Ինչ վերաբերում է Ջահան գետին, որը նույնն է, թե Ջայհանը, քանի որ հայերը ինչ հնչյունը ինչ են արտասանում: Սա մեկն է երեք խոշոր գետերից, որոնք են Սայհանը (Սարոս), Ջայհանն (Պիրամոս) ու Բորդանը (Կյուդհոս), որոնք [համապատասխանաբար] գետեր են Տարսուսի, Մսիսի և Ադանայի մոտ: Այն սկիզբ է առնում Ռումի երկրից և թափվում աղի ծովը: Ինչ վերաբերում է Ջայհունին (իմա՝ Ամուր Դարյա), ապա այն գետ է, որ իջնում է՝ խորանալով դեպի Խորեզմ: Ջայհան գետը, որի ակունքը 60 ցւ՝ հեռավորության վրա էր, իջնում է դեպի հարավ, մինչև որ անցնում է Ռումի երկրի Սիսմա քաղաքի մոտով, ապա երկրաբերձ լեռների միջով գալարվում դեպի արևմուտք, մինչև որ հասնում է երկու քաղաքի, որ [մի ժամանակ] հռոմեացիներին էին պատկանում՝ Բարսա (Թարսա) և Ջաբատրա (իմա՝ Ջապետրա կամ Սոգոպետրա), և հոսում նրանց մեջտեղով: Հետո [կրկին] լեռների միջով է անցնում և վերադառնում իր նախկին ուղղությանը՝ դեպի հարավ, մինչև հասնում է Մսիսի սահմանային ամրությունը և հոսում նրա և Լուքքամի լեռների (իմա՝ Սև լեռներ) միջով և թափվում Ասորիքյան (իմա՝ Միջերկրական) ծովը: Այս գետի երկարությունն իր սկզբնակունքից մինչև գետաբերան յոթ հարյուր երեսուն և ավելի մղոն էր: Սիսն ու [Սսի] երկիրը շրջապատող լեռնաշղթան ալ-Լոֆֆաֆի լեռներ են անվանվում: Նրանց երկարությունը 100 մղոն է: [Ընդ որում] մղոնն աչքով տեսանելի հեռավորության չափն է, իսկ [մեկ] փարսախը հավասար է երեք մղոնի:

Լևոնի տան կողմից Սսի երկրի նվաճման մասին¹⁴⁰

Այս տունը Լևոնի (իմա՝ դինաստիան, հարստությունը) տունն է այս թաքֆուրի: Այս երկիրը [մի ժամանակ] գտնվում էր Հոռոմների իշխողի պաշտպանության տակ, ով իր բանակով պաշտպանում էր այն: [Սակայն հետո] այն գրավվեց Մալիհ իբն Լավունի (Լևոնի որդի Մլեհի) կողմից: Այդպես [պատահեց], որովհետև նահատակ սուլթան Նուր ալ-Դին Մահմուդ իբն Ջանգին, Ալլահն օրհնի նրան, հենվում էր նրա վրա և [ինքն էլ իր հերթին] աջակցում նրան: Նա դրանով նկատառում ուներ՝ անհավատներին իշխանություն տալով [պայքարել այլ] անօրինաց դեմ: Մալիհը հզորացավ երկրում, ինչը զայրացրեց Հոռոմների իշխողին, ով Հոռոմների գործով [նրա դեմ] ուղարկեց իր ազգական Անդրոնիկոսին¹⁴¹: Մալիհը ջարդեց նրան և գերի վերցրեց նրա գորապետերից 30 հոգու: Այս բախումը տեղի է ունեցել [հիջրայի] 568 թվականի Ռաբի ալ-ախար ամսի վերջին՝ կիրակի օրը (1172 թ. դեկտեմբերի 17): Երբ այս նորությունը նահատակ Նուր ալ-Դինին հասավ, նա լավ վերաբերմունքի արժանացրեց նրան և պատվո հանդերձներ ընծայեց: Ապա նամակ գրեց Բաղդադ՝ նրան [խալիֆայի մոտ] գովասանքի արժանացնելով և չեղտելով, որ այդ Մլեհ Հայը, որ իր վասալներից (բնագրում՝ min ġumlat ġilmānihi) է, ջարդել է Հոռոմներին՝ այդ կերպ ցանկանալով հաճոյանալ Բաղդադի ժողովրդին¹⁴²: Այդ ժամանակ[ներ]ից ի վեր Թաֆֆուրի տան ոտքն ամրապնդվեց այս երկրում՝ միայն թե որպես [Նուր ալ-Դին] ալ-Շահիդի կառավարիչներ, բայց [հետագայում էլ] շարունակեցին [իշխել]:

Վարքագրության հեղինակն ասաց.

«Այս Սսի երկիրը [վաղուց ի վեր] Դուրուբ («Կապաններ») և ալ-Ավասիմ («սահմանային բերդամրոցներ») են կոչում: Այստեղով են անցել արշավանքները, այնտեղ՝ սահմանային գոտում է, որ արյունալի մարտեր և պատերազմներ են եղել: Տեղի բնակիչները սահմանակալներ, արշավանքի, սրբազան կռվի մարտիկներ ու սահմանապահներ էին: [Մի ժամանակ] այն պատկանում էր Եգիպտական թագավորությանը: Ահմադ իբն Տուլունը՝ Եգիպտոսի էմիրը¹⁴³, [հիջրայի] 265 թվականի Մուհարրամ ամսում (878 թ. սեպտեմբերի 3 - հոկտեմբերի 2) եկել ու գրավել էր Անտիոքը Սիմա ալ-Տավիլից: Ահմադը Տարսոն էր

անցել և այնտեղ մտել հիշյալ տարվա Ռաբրի առաջին ամսում (878 թ. նոյեմբերի 1-30): Վերջինս այդ ժամանակ իսլամի երկրների մաս էր կազմում: Նա օթեկան առավ այնտեղ և [քաղաքն] այնքան լցվեց նրա զորքերով, որ գները բարձրացան և բարդություններ ստեղծեցին բնակչության համար: [Նրանք] ասացին. «Մենք սահմանային գոտում ենք, իսկ դու մեզ տանջեցիր և օգտվեցիր մեզ մոտ եղած պարենի [պաշարից]: Եթե ոստիը մեզ շրջափակման մեջ առնած լինեք, մեզ ավելի շատ ներդրյուն չէր տա, ինչքան որ դու պատճառեցիր մեր տներին ու պարենին»: Ժողովուրդը գեներ բարձրացրեց և կռվեց [նրա դեմ]: Նա իր զինակիցներին հրամայեց հանձնվել նրանց, և հանձնվեցին: Սահմանային բնակչությունը խլեց նրանց փողերն ու մետաքսը: Ահմադ իբն Տուլունի նպատակն էր թշնամուն հասկացնել Տարսուսի ժողովրդի գործությունը, թե [ի՛նչ] ամբողջուն և ուժ ունեն. եթե էմիր Ահմադ Իբն Տուլունի պես մեկն է տեղի տվել նրանց առաջ, ում զորքերը երկիր են լցնում, թշնամին կհրաժարվի նրա նկատմամբ ունեցած իր նկրտումներից: Ապա [Ահմադը] մարդ ուղարկեց նրա ժողովրդի մոտ՝ նրանց բացատրելու իրավիճակը: Նա իր կողմից կառավարիչ նշանակեց [այնտեղ] Տախշի իբն Բալիդը (°) անունով:

[Իբն Տուլունը] մտադիր էր մնալ սահմանային գոտում, բայց նա լուր ստացավ, որ իր որդին Եգիպտոսում դուրս է եկել իր հնազանդությունից: Նա [հարկադրված էր] վերադառնալ Եգիպտոս: Բայց հետո Ահմադը [կրկին] վերադարձավ Տարսոն: Երբ Մսիս հասավ, Բագման (sic, պետք է լինի Յագման-Գ.Դ.) ալ-Խադիմը (բառացի՝ «ներքին») ¹⁴⁴ ապստամբեց նրա դեմ: Ահմադն իր հզորագույն զինակիցներին զորքով ուղարկեց՝ նրան հպատակության կոչելու՝ խոստանալով ապահովել նրա անվտանգությունը և չպատժել գործած արարքի համար: [Սակայն վերջինս] չհամաձայնեց և պարզվեց, որ ամրացել է իր բերդում և նրա պարիսպների վրա քարանետ մեքենաներ տեղադրել: Ահմադը եկավ իր զորքով և պաշարեց այն: Սառնամանիք էր, և անդադար անձրևում էր, առատ ձյուն տեղում: Բագման ալ-Խադիմը հնարամտություն բանեցրեց և սկսեց ջուր լցնել [բերդի պատերի տակ] բանակած զորքի վրա: Կարծեցին, թե անձրև է գալիս և չհասկանալով այդ՝ խեղդվեցին, և նրանց պատկանող ամեն ինչ կորավ:

Ահմադը պարտված Ադանա վերադարձավ, [առժամանակ] այնտեղ մնաց, հետո մեկնեց Մսիս, որտեղ հիվանդացավ և հետ դարձավ Եգիպտոս ու [այնտեղ] մահացավ:

Իսկ Քաֆուրը ալ-Իսլիդի¹⁴⁵ օրոք, ով Եգիպտոսի սուլթանն էր, անուշադրություն ցուցաբերվեց սահմանային ամրությունների հարցում, և հռոմեացիների արքա ալ-Նիկիթուրը հարձակվեց դրանց վրա: Պաշտպանություն կազմակերպեցին, ուստի նա կրակի տվեց մերձակա գյուղերը, կտրեց ծառերը և ավերի ենթարկեց շրջակա բնակավայրերը: Քաֆուրն իմացավ այդ մասին, բայց [անուշադրության] տվեց: Նա մի օր երազում տեսավ, թե իբր երկինք է բարձրացել՝ ձեռքին մուրճ, որով փորձում էր քանդել երկինքը: Երբ լուսացավ, երազամեկնիչ կանչեց և պատմեց նրան երազում տեսածը: [Վերջինս] ասաց. «Ռու մարդ ես, որ կրոնն է ֆանդու և ոչինչ չի անում [հանում] սրբազան պատերազմի»: Սրանից Քաֆուրը սթափվեց և Իբն Ջաաֆարանի անունով մի հրամանատարի գլխավորությամբ զորք պատրաստեց՝ ասելով. «Յո՛ւյց տվե՛մ մի մեծ բնակավայր, որ այն եկամուտն ունի, ինչ Տարսունը, որ ավերվեց, և որ այդ բնակավայրը շուկա և բաղնիքներ ունենա: Ասացին՝ Բուսիր ալ-Մադարին (°)»:

էջ 468

Սուլթանը շարժվեց և էմիր Ալա ալ-Դին Տալբարս ալ-Վազիրիին ուղարկեց Ռումմանա գյուղի¹⁴⁶ մոտ՝ հրո ճարակ դարձնելով այն: Այնտեղ եղած հայերը սպանվեցին, նրանց կանայք գերեվարվեցին, որովհետև նրանք թաքցրել էին մի խումբ մոնղոլների և սրածել մի խումբ մուսուլմանների¹⁴⁷:

3.2 TAŠRĪF AL-AYYĀM
WA-L-‘UṢŪR FĪ SĪRAT AL-MALIK AL-MANŠŪR
«[ԳԻՐԲ] ԱԼ-ՄԱԼԻԲ ԱԼ-ՄԱՆՍՈՒՐԻ ԿՅԱՆՔԻ
ՓԱՌԱՎՈՐ ՕՐԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ»

էջ 1

Այս տարում (հիջրայի 680 / 1281/1282 թ.) նորություններ հասան Հալեպից, որ [մի խումբ] ասպատակիչներ՝ թվով մոտ 600-700 հեծյալներ, ուղղվել են դեպի Ռում: [Ճանապարհին] նրանք պատահաբար հանդիպել են և կողոպտել մի քարավանի՝ բաղկացած 200 ուղտից, որ Սսի երկրից Ռումի երկիր էր դուրս գալիս: Այն բեռնավորված էր շաքարով, օճառով, պիստակով, արճճով, բամբակով¹⁴⁸: Նրանց առաջ է շարժվել Ռումի մեծագույն էմիրներից մեկը՝ Իբն ալ-Կուտնա անունով (գուցե՞ Quṭnī, այն է՝ «բամբակագործի որդի»)՝ երեք հարյուր ձիավորների հետ մեկտեղ: Նրանք (իմա՝ «ասպատակիչներ») սպանել են նրան և նրա զինակիցներից մոտ երկու հարյուր հեծյալների, շատերին վիրավորել և հասել Արաբլիկա (գրչական սխալ է. պետք է լինի Արաբլիյա, որ Հերակլեան է-Գ.Դ.), որի կառավարիչը փախուստի է դիմել: Նրանց են միացել նաև Շուջա ալ-Դին Հուխդին և Մուբարիզ ալ-Դին Սարվան, որ Իբն Կարամանի զինակիցներից էին: Համախմբվեցին և ձիավարեցին [ընդհուպ մինչև] դեպի Բուլղար լեռ՝ Մունդասի վերևում, [ապա] ողջ-առողջ հետ դարձան Սսի ճանապարհի և Ռումի երկրի միջև ընկած լեռների արանքով:

էջ 24

Այս թվականին (իմա՝ հիջրայի՝ 681 / 1282/1283 թ.) ժամանեցին [Իսմաիլյան] կարգի կառավարիչների կողմից Սսի տիրոջ մոտ ուղարկված [Իսմաիլյան] կարգի դեսպանները (բնագրում՝ rusul al-da‘wa)՝ իրենց

Հետ բերելով երկու տարվա համար նրա վրա դրված [հարկագումարը]:
Նրանք նրա կողմից բերեցին 11600 դիրհամ, որ նրա վրա դրել էր
[Իսմաիլական] կարգը, և հանձնվեց սուլթանական գանձարան¹⁴⁹:

էջ 27

Կատիմա (Կատիբա) բերդի գրավումը նգովյալ թշնամու ձեռքից

Այս բերդը մի հզոր սահմանային ամրություն էր (tağr ‘azīm) և անառիկ ամրոց: Նախկինում այն համարվում էր Ամիդի բերդերից մեկը, հետո ընկել է Ռումի արքաների ձեռքը, այնուհետև անցել նգովյալ թշնամուն (իմա՝ մոնղոլներին), որն այնտեղ կառավարիչներ ուներ, և նրա պայքարի ամրակետերից էր: Այն երբեք պաշարմամբ չէր վերցվել, բայց Քարքար բերդի համար նրանից ավելի վնասակար և վտանգավոր բերդ չկար: Մեր տեր սուլթանը, իշխանություն անցնելուց ի վեր, շարունակ մտադրում էր այս սահմանային ամրությունների, դրանք թուլացնելու կամ ճնշելու կամ էլ նրանց բնակչությունն իր կողմը գրավելու մասին: Կառավարիչներն սկսեցին մերթ սիրաշահել նրանց, մերթ լավ վերաբերմունքի արժանացնել, մերթ կոպիտ վերաբերվել, մերթ ահաբեկել, մինչև որ մի օր նրա պարենն ավարտվեց: [Հարմար առիթից օգտվելով՝ սուլթանը] Քարքարի կայազորից մոտ հարյուր հոգու [փութով] այնտեղ ուղարկեց: Պաշարեցին այն, բայց [նաև] զգուշացան նրանից, քանի որ այն [չատ] մոտ էր իրենց: Այն գտնվում էր Եփրատի կողմում՝ արևելյան ափին: [Բերդի] բնակիչներն ականատես եղան [մամլուքյան զորքերի] ճնշմանը, ինչպես նաև [հասկացան.] որ թշնամին (իմա՝ «մոնղոլները»- Գ.Դ.) իրենց թողել է [բախտի քմահաճությամբ] և չի մնացել մեկը, որ օգնություն կհասնի իրենց: Ամրոցում պարենի բացակայության պատճառով սկսեցին որոշ ժամանակ կաշի ուտել: Բայց հետո այլ հնար չգտան՝ բացի սուլթանական ողորմածությունը հայցելուց, և դրական պատասխան ստացան: Մեր տեր սուլթանի կառավարիչները սահմանային ամրությունը նրանցից վերցրեցին 683 թվականի Ռաբի երկրորդ ամսի 19-ին՝ հինգշաբթի օրը (1284 թ. հուլիսի 5): Ապա Քարքարից մի խումբ ռազմիկների ուղարկեցին այնտեղ: Այնտեղ մարտիկներ ուղար-

կելու պահանջ ներկայացվեց շրջակայքի մյուս սահմանային բերդերին [նույնպես]՝ օրինակ ալ-Բիրային, Այնթաբին, ալ-Ռավանդանին, որպեսզի հաստատվեն այնտեղ: Այս սահմանային բերդին մատակարարվեցին ամենն, ինչի կարիքը որ ունեն՝ սարքավորումներ, հացահատիկ, ձեթ, աղեղներ, tawānit¹⁵⁰, նետեր և այլ ռազմամթերք և սարքավորումներ: Այս սահմանային բերդի պահապան նշանակելով իրեն հավատարիմ, վստահելի և հնարամիտ ռազմիկներին՝ նա սկսեց այն օգտագործել Ամիդ, Սուլվեյդա և այլուր ուղղված արշավների համար: Նրանցից գլխավորներին [սուլթանական բարձր] պատիվներ և շատ դրամ ուղարկեցին՝ գոհացնելու նպատակով, և այդ ամենը վավերացվեց (i'tamada ġamī dalika): Այս բերդում շատ հացահատիկ հավաքվեց, կայազորն ուղարկվեց և որպես կանխավճար երկու ամսվա ոռճիկ (ġamakiyya) և օրապահիկ (բնագրում՝ ġirāya, այն է՝ բնամթերքով վճարում- Գ.Դ.) ստացավ: Նրանց Դամասկոսից ռազմամթերք ուղարկեցին Դամասկոսից և զինատեսակներ (բնագրում՝ al-zardhāt, պետք է լինի՝ al-zardhānāt- Գ.Դ.)՝ Զենովայից (°, բնագրում՝ ġanawiyyāt), աղեղներ, սրեր, նետեր, պարաններ, քարանետ մեքենաների սարքավորումներ, բաբաններ, sirbāqāt¹⁵¹ և այլն՝ ամեն տեսակից: Այն դարձավ իսլամի ահաբեկ բերդերից մեկը, որոնց պաշարներն օգտակար էին, իսկ պաշարի մարտադաշտերը՝ համընդհանուր¹⁵²:

էջ 30

Այն (նկատի է առնված ալ-Քախթա բերդը-Գ.Դ.) շարունակեց պատառ լինել անհավատների կրծքում և ոսկոր նրանց կոկորդում: Այս բերդերը՝ այսինքն Քարքարը, Կատինան և ալ-Քախթան, [գործով] միաբան և [խոսքով] համերաշխ դարձան մեկը մյուսին՝ իրար փոխադարձաբար օգնելով արշավանքներում: Այս բերդերի ճնշումը եռապատկվեց Բահասնայի (Բեհսնայի), Սաի տիրոջ, Ռումի, ինչպես նաև այլ կողմերի վրա:

Հալեպի փոխարքայության հարձակումը Սսի երկրի վրա, և թե ինչ տեղի ունեցավ դրա ընթացքում¹⁵³

Մեր տեր սուլթանը հրամայել էր Հալեպի փոխարքային, որ արշավներ կազմակերպի Սսի երկրի վրա՝ պատժելու նրա տեր Լեոնին այն բանի համար, որ Հալեպում էր գործել, ինչի մասին արդեն հիշատակել ենք. այն է՝ մզկիթի վրա հարձակվելով այն կրակի տալու և այլնի մասին¹⁵⁴: Հաղթական զորքերը նրա դեմ ուղղվեցին Հալեպից¹⁵⁵: Այս տարվա (իմա՝ հիջրայի 682 թ.) Սաֆարի 23-ին (1283 թ. մայիսի 23) հասավ Հալեպի փոխարքայի նամակը, որում ասվում էր, թե որ մեծագույն էմիրներն են Սիս ուղարկվել: Եվ որ նրանք ճամփա են ընկել Սսի երկիր, ներխուժել այնտեղ սրով թիրախելով Այաս քաղաքը: [Տեղ հասնելով տեսել են], որ նրա բնակչությունն ամրացել է այնտեղ: Սա տեղի է ունեցել Սաֆարի 10-ի (1283 թ. մայիսի 10)՝ կիրակի օրվա գիշերը: Նրանց հետևակայիները և ռազմիկները քաղաքի շրջակայքում էին մնացել՝ թույլ չտալու մուտքն այնտեղ և պաշտպանելու: Բայց հաղթական զորքերը հարձակվեցին նրանց վրա, ջարդեցին և հավաքեցին նավահանգստի մոտ: Ապա մի մեծ խմբի սրի քաշեցին դարպասի մատույցներում՝ նրանց շրջափակման մեջ առնելով այնտեղ: Զորքն ուղղակի փոթորկեց քաղաքում՝ այն համատարած ավարառություն և ավերածություն ենթարկելով: Գիշերեցին այնտեղ մերձակայքում՝ արթնանալով դուրս գալու մասին մտադրություն: Երկուշաբթի օրն արդեն նրանք մոտեցան լեռնային ճանապարհին: Մինչ այդ նրանք հետախույզներ էին ուղարկել, և երբ վերջիններս հետ եկան, ասացին, որ իրենք մեծ բազմություն են տեսել թեև Համդունի կողմից: Այդժամ զորքերը հասել էին Բար ալ-Իսֆանդարունայի (Ալեքսանդրետի) մոտ: Նրանց առաջնորդում էին էմիր Ջամալ ալ-Դին ալ-Սարվան, էմիր Շիհաբ ալ-Դին Մարվանը, էմիր Սայֆ ալ-Դին Բալաբան ալ-Սարուրին և այլք: Մի պահ կանգ առան՝ իրավիճակը քննելու նպատակով: Երբ Սսի զորքն սկսեց հետապնդել [մուսուլմանական] զորքին, նրանք անվտանգությունից ելնելով կանգ առան Դումն Լսուրվոցի մոտ՝ մարտի բռնկելով: Մուսուլմանները ջար-

դեցին նրանց Բարձրյալ Ալլահի ուժով, ոմանց գցեցին իրենց ձիերից և իրենց առջևից քշեցին al-Bi'āt-ից¹⁵⁶ գեպի Թիլ Համդուն: Երեկոյան զորքը կանգ առավ, բայց մի զորագունդ սկսեց հետապնդել հայկական մի զորավարի: Նրանք պատահեցին մոտ 500 ռազմիկից բաղկացած մի հայկական գնդի: Երբ վերջիններս տեսան իրենց պարտված զինակիցներին, իրենք ևս նահանջեցին: Սա տեղի ունեցավ գիշերային աղոթքից հետո: Զորքը գիշերեց Բաբ ալ-Իսքանդարունայում, իսկ կիրակի օրն առավոտյան սկսեցին փնտրել նրանց, ովքեր հետ էին մնացել: Հայերը տասն օր էր, ինչ գիտեին հաղթական զորքերի շարժի մասին: Լեոնը՝ Սաի տերը, [զորք էր] հավաքել, մեծ բազմություն [խմբել], օգնական ուժեր կանչել և իր ծառայություն տակ առել: Այդ բախման ժամանակ բռնվածների թվում էր Սաի տիրոջ մարդկանցից մի մեծ հրամանատար, ով ասաց, որ իրենց թիվը տասը հազար ռազմիկ էր եղել: Այս գերու վիզը կտրեցին: Մեկ ուրիշ անձի վիզն էլ կտրեցին, ով ասաց. «Ես մեծ իշխան եմ, խնայե՛ք ինձ»: Բայց նրա խոսքին չանսացին:

Ասպատակիչները հասան Զահան գետին և երբ դուրս եկան՝ պատահեցին հայկական զորքի մի մասին և մարտ տվեցին՝ առգրավելով նրանց նժուլգները: Մոտ կես օրվա ճանապարհ հետապնդեցին նրանց: Հաղթական զորքերը վերադարձան հարստություններով և ավարով, և նրանցից ոչ մեկը չվնասվեց¹⁵⁷:

էջ 43

Հետո մեր տեր սուլթանը, թող Ալլահը հավերժացնի նրա սուլթանությունը, իր էմիրներին և զորքերին հրամայեց [պատրաստվել] աստվածապահ Ասորիք (al-šām al-mahrūsa) շարժվելու՝ ի շահ երկրի և ենթակաների: Բանն այն է, որ նա օրհնություն էր բերում ամենուր, ուր գնում էր: Եվ [որովհետև] դա հավանաբար լռեցնելու էր մահաբեր թշնամուն և [փոխարենը] հանդարտություն էր բերելու: [Հիջրայի 682 թ.] Զումադա I ամսի կեսին (1283 թ. օգոստոսի 11) մեր տեր սուլթանը, թող Ալլահը հավերժացնի նրա հաղթանակը, ձի հեծնեց իր միջնաբերդից և ճամբարեց հաղթության դարպասից դուրս: Նա մեկ-

նեց [Ջուժմադա I] ամսի 18-ին (օգոստոսի 14): Շարժվեց և Ղազալուժ
իջևանեց Ջուժմադա II ամսի 7-ին (1283 թ. սեպտեմբերի 2): Այնտեղից
մեկնեց նույն ամսի 28-ին (սեպտեմբերի 23)՝ երեքշաբթի օրը¹⁵⁸, և
Դամասկոս մտավ Ռաջաբ ամսի 8-ին (հոկտեմբերի 2)՝ ուրբաթ օրը¹⁵⁹,
և կանգ առավ այնտեղ՝ իր զորքի վիճակը բարեկարգելու և բոլոր
կողմերի հեռու և մոտիկ թշնամական երկրներին տազնապ ներշնչե-
լու համար: Նրա աչքը մերթ ուղղված էր Պարսկաստանի, մերթ Իրա-
քի և Արևելքի, մերթ Ռումի և Սսի [երկրի], երբեմն էլ Արևմուտքի՝
Եմենի և Հնդկաստանի ուղղությամբ¹⁶⁰:

էջ 67

**Հալեայյան զորքերի շարժը դեպի ալ-Թինի,
և թե ինչ հաղթանակի արժանացրեց նրանց Ալլահը (1284 թ.)**

Այս ամբողջ ընթացքում մեր տեր սուլթանին լուրերը էին հաս-
նում բանազնացներից (al-quṣṣād), տեղեկատուներից (al-munāṣiḥīn)¹⁶¹
և անցորդներից, որ ալ-Թինի բերդի բնակիչ մի խումբ հայեր ճանա-
պարհներ են կտրում, ահի մատնում ճամփորդներին, հարձակվում
բանազնացների վրա: Դժգոհությունները նրանցից հաճախացան, և
մեր տեր սուլթանը մարդ ուղարկեց աստվածապահ Հալեպի փոխար-
քայի մոտ՝ հրամայելով այս վայրը գրավելու հնարավորությունն որո-
նել: Հալեպի փոխարքան զբաղվեց այս գործով. նա [զորքերի] բազ-
մությունից մի զորախումբ ուղարկեց էմիր Սայֆ ալ-Դին Բալաբան
ալ-Շամսիի հրամանատարությունը: Զորախումբն ուղղություն վերց-
րեց դեպի այն, պաշարեց և փորձեց գրավել: Բաբաններով հարվա-
ծեցին նրան և քանդեցին նրա աշտարակներից մեկը, ինչպես նաև
պարսպապատը: Նրա բնակիչները բղավեցին՝ ամān (այսինքն՝ ապա-
հովություն երաշխիք խնդրեցին-Գ.Դ.): Նրանք փրկություն խնդրեցին
նրանցից, որ իրենց մոտ էին եկել: Նրանց մոտ էին ուղարկվել Հալե-
պի զորախմբի (ḥalqa)¹⁶² երկու ռազմիկներ: Վերջիններս խոսեցին
նրանց հետ՝ առաջարկելով կամ իջնել բերդից կամ նրանց վրա հարկ
պիտի դրվե՞ր [մամուլեյան] հաղթական բանակի նժույգների համար
պալտերի¹⁶³ տեսքով: Նրանք համաձայնեցին իրենց փրկության հա-

մար վճարել 17 հազար դիրհամ, որից երկու հազարն անմիջապես վճարեցին, իսկ մնացած գումարի համար [որպես երաշխիք] մի քրիստոնյայի պատանդ տվեցին: Այս ընթացքում, երբ բանակցություններ էին վարվում բերդի բնակչության հետ՝ նրանց մոլորեցնելու նպատակով, մինչև որ կկարողանային [ընկճել նրանց], ժամանեց Իբն ալ-Բաբան¹⁶⁴ և կանգ առավ նրանցից ոչ հեռու գտնվող Լիսուն (կամ Լայսուն)¹⁶⁵ լեռան վրա՝ նպատակ ունենալով օգտվել իրավիճակից: Նա մի խումբ կառաղով (սահմանապահ) մոնղոլների ուղարկեց, որոնց դեմ հանդիման դուրս եկան հաղթական առաջապահ գնդերը (բնագրում՝ al-yazak al-mansūr), մարտ տվեցին և կոտորեցին թաթարներից շատերին, վեց հոգու գերի վերցրին, կարաղուլներից շատերի նժուլգները խլեցին: Հաղթանակը մոսուլմանների կողմն էր: Նախքան այդ [մարտում] նետից մարտիրոսվեց էմիր Շիհաբ ալ-Դին Հայդարը: [Այնուհետև] զորքը խաղաղություն ձգտումով հետ դարձավ և այդ տարվա (հիջրայի 683 թ.) Ռաբի ալ-ախար ամսի 8-ին (1284 թ. հունիսի 24)՝ չաբաթ օրվա վաղ առավոտյան, հասավ ալ-Բիրա: Ալ-Թինի բերդը քանդվեց, և այդուհետ այլևս ոչ մեկը չմնաց, որ կարող էր այնտեղ ապրել¹⁶⁶:

էջ 92

Հաշտությունը Սսի տեր Թաֆֆուրի հետ (1285 թ.)

Երբ մեր տեր սուլթանը պաշարել էր Հիսն ալ-Մարկաբը, ժամանեց Հայոց երկրի տաճարականների ֆամանդուր՝ Սսի տիրոջ գրավոր դիմումով: Նա Թաֆֆուրի կողմից ընծա և գրություն էր բերել, ինչպես նաև մեկ այլ գրություն տաճարականների հրամանատարից (իմա՝ մագիստրից)¹⁶⁷: Այն բովանդակում էր Սսի տիրոջ վերաբերյալ խնդրանք ու նրա հանդեպ ներողամտության և նրա ներողությունն ընդունելու հայցում: Տաճարականների մագիստրի խնդրանքի պատճառն այն էր, որ նրա (իմա՝ Լևոնի) դեսպանները պիտի ներկայանային սուլթանական արքունիք, բայց ամեն անգամ երբ Սսի տիրոջ դեսպանները ներկայանում էին, նրանց բռնում և կալանավորում էին՝ առանց նրան որևէ պատասխան հետ ուղարկելու: Ուստի նա հնարա-

մտուլթյուն դրսևորեց՝ տաճարականների մագիստրի օգնությանը դիմելով, որպեսզի Քամանդուրն այս միջնորդությամբ Հանդես գա և շտկի իրավիճակը: Տաճարականների մագիստրը ծառայություն ուներ մատուցած մեր տեր սուլթանին, ինչը պահանջում էր, որ նա դրական պատասխան տա նրա խնդրանքին՝ պահի նրա հարգանքը և ընդունի նրա միջնորդությունը: Քամանդուրը ներկայացավ մեր տեր սուլթանին և մատուցեց նվերը՝ մի փառահեղ ընծա՝ արծաթեղեն, կտորեղեն և այլն: Նա (իմա՝ Լևոնը) խնդրում էր, որ իր վրա տարեկան հարկ սահմանվի: Բահասնան (Բեհեսնի) հանձնելու մշտական պահանջ կար նրանից, բայց նա սակարկում էր և շարունակ ներողություն խնդրում: [Ի վերջո] որոշվեց, որ նա յուրաքանչյուր տարի մեկ միլիոն դիրհամ հարկ վճարի՝ դրամով և ապրանքատեսակներով՝ մասնավորապես 500 հզ. արծաթե դիրհամ (ըստ կշռի), որ հաշվով հավասար էր 700 հզ. դիրհամի, ազնվական ձիեր և ընտիր ջորիներ՝ 50 գլուխ, երկաթե պայտեր՝ 10 հազար հատ՝ իրենց մեխերով¹⁶⁸, որ պետք է բերվեին այն տեղը, որտեղ նրան կհրամայվեր: Ի լրումն այս ամբողջի՝ նվերներ, գործվածքեղեն և այլն: Որոշվեց, որ նա պետք է ազատ արձակի իր մոտ կալանքի տակ գտնվող բոլոր առևտրականներին՝ իրենց ինչքով և ապրանքներով, իսկ ով, որ մահացել էր նրանցից, փոխարենը նման մի գերու արձակի՝ ուղարկելով հանգուցյալի ունեցվածքը, ազատ արձակի իր երկրում բանտարկված բոլոր մուսուլմաններին: Սրանով հաշտության պայմանագիրը կազմվեց և համապատասխանեցվեց: Մեր տեր սուլթանը երգվեց նրա վրա [հիջրայի 684 թ.] Ռաբի ալ-ախսար ամսի 2-ին (1285 թ. հունիսի 7)՝ հինգշաբթի օրը: Իսկ էմիր Ֆախր ալ-Դին ալ-Մուհրին¹⁶⁹ ճամփա ընկավ Սսի տիրոջ երգման համար և նախօրոք մեկ տարվա հարկը, ինչպես նաև գերության մեջ գտնվող վաճառականներին և այլոց բերելու: Սսի հաշտությունն այս կերպ հաստատվեց, և գործը բարով ավարտվեց: Գանձարաններին մեծ օգուտ եղավ այս հսկայական գումարից, որ պետք է ամեն տարի վճարվեր: Եվ եթե Սիսը գրավվեր և վերաբնակեցվեր, դա էլք արդարացնի կատարվելիք ծախսերը:

Հաշտության պայմանագրի տեխտը և երդումը

Հանուն բարեգութի և ողորմած Աստծո.

Ասում եմ՝

ես Կոստանդինի որդի Հայթումի որդի Լիֆունեն եմ,

Աստծով եմ երգվում, Աստծով եմ երգվում, Աստծով եմ երգվում,

Աստծով եմ երգվում, Աստծով եմ երգվում, Աստծով եմ երգվում,

Աստծով եմ երգվում, Աստծով եմ երգվում, Աստծով եմ երգվում,

Երգվում եմ Քրիստոսի ճշմարտությամբ,

Երգվում եմ Քրիստոսի ճշմարտությամբ,

Երգվում եմ Քրիստոսի ճշմարտությամբ,

[Երգվում եմ] խաչի ճշմարտությամբ, խաչի ճշմարտությամբ,

խաչի ճշմարտությամբ,

[Երգվում եմ] Ավետարանի ճշմարտությամբ, Ավետարանի ճշմարտությամբ, Ավետարանի ճշմարտությամբ,

[Երգվում եմ] Հոր, Որդու և Սուրբ Հոգու ճշմարտությամբ,

Ամենագորեղ խաչի ճշմարտությամբ, որ [իր վրա] տարել է վսեմափառ Մարգեղությունը,

Մեկ էություն երեք Անձերի ճշմարտությամբ,

Չորս ավետարանների ճշմարտությամբ՝ գրված Մատթեոսի, Ղուկասի, Մարկոսի և Հովհաննեսի կողմից,

Եվ նրանց աղոթքների և օրհնության ճշմարտությամբ,

Տասներկու աշակերտների և եկեղեցու շուրջը ժողովված 318 [եպիսկոպոսների] ճշմարտությամբ¹⁷⁰,

Այն ձայնի ճշմարտությամբ, որ Հորդանանի վրա իջավ և իր ճիշով հետ քչեց նրան¹⁷¹,

Աստծո ճշմարտությամբ, ով Ավետարանն իջեցրեց Հիսուսի՝ Մարիամի և Սուրբ Հոգու ու նրա Խոսքի որդու վրա,

Լույսի օրհնյալ մայր Սուրբ Մարիամի, Հովհաննես Մկրտչի, Սուրբ Թովմասի և Սուրբ Մատթեոսի ճշմարտությամբ,

Մեծ Պաշտոնի ճշմարտությամբ,

Իմ քրիստոնեական կրոնի և Հավատի ճշմարտությամբ,

Եվ այն մկրտության, որ ստացել եմ քրիստոնյա քահանաներից և Հայրերից,

[Սուրբ] Հաղորդություն տվող բոլոր Հայրերի ճշմարտությամբ:

Արդ, ես այս պահից և այս ժամից ազնիվ մտադրությամբ և մաքուր խղճով հնազանդություն և հավատարմություն եմ հայտնում մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին՝ աշխարհի և կրոնի սուր, խալամի և մուսուլմանների սուլթան, սուլթանների և արքաների գերակա, եգիպտական, ասորիքյան, հալեպյան, եփրատյան տարածքների, Ռումի բերդերի և երկրի, արևելքի երկրների սուլթան, հողազնդի արքա Աբու ալ-Ֆաթհ Կալավուն ալ-Սալիհին՝ հավատացյալների վեհապետի (իմա՝ խալիֆայի-Գ.Դ.) գործակից, և նրա որդուն՝ տեր սուլթան ալ-Մալիք ալ-Սալիհ Ալա ալ-Դուռնյա վալ-Դին Աբու ալ-Հասան Ալիին՝ հավատացյալների վեհապետի ընկեր, և նրա որդուն՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆ Սալահ ալ-Դուռնյա վալ-Դին ինալիին՝ հավատացյալների վեհապետի ջատագով:

[Հավատարմություն եմ հայտնում] այս զինադադարի [պայմանագրին] ամբողջությամբ՝ շարադրված հիշյալ երգման ներքո, որի ժամկետը 10 ամբողջ, հաջորդական և շարունակական տարի է և 10 ժամ: Նրա սկիզբը մարգարեի [Ալլահի աղոթքներն ու խաղաղությունը նրան] հիջրայի 684 թվականի Ռաբի ալ-ախար ամսի 1-ն է՝ օրհնյալ հինգշաբթի օրը (1285 թ. հունիսի 6), որը համապատասխանում է հուլյն Ֆիլիպի որդի Ալեքսանդրի 1596 թվականի Հազիրան ամսի 7-ին:

Ես կհետևեմ նրան մինչև նրա ժամկետի ավարտը, կկատարեմ նրա պայմանները մեկ առ մեկ՝ պարտավորվելով հավատարիմ լինել նրան և նրա բովանդակությանը, չհակառակվել ո՛չ խոսքով, ո՛չ արարքով, ո՛չ ակնարկով և ո՛չ էլ նշանով: Չեմ փորձի [այլ կերպ] մեկնաբանել իմ այս երդումն ու ոչ էլ այս պայմանագիրը: Խորամանկություն չեմ ցուցաբերի՝ խախտելու այն կամ որևէ բան նրանից, նրա կամ նրա որևէ դրույթի կամ հիշյալ պայմանագրի պայմաններից որևէ մեկի հետ կապված որոշում չեմ հայցի:

Եվ եթե խախտեմ այն կամ նրանից որևէ բան, կամ եթե նոր որոշում պահանջեմ կամ բացառություն դնեմ նրա կամ նրա որևէ դրույթի համար, ապա ինչ որ ունեմ՝ կենդանի թե անշունչ, պիտի նվիրաբերեմ քրիստոնյա աղքատներին և ընչազուրկներին, պարտավոր կլինեմ երեսուն անգամ ոտքով՝ բոկոտն և մերկազուլիս, քայլել մինչև Սուրբ Երուսաղեմ, անժամկետ ծոմ պահել, և եթե հակառակվեմ սուլյն

պայմանագրի պայմաններին կամ նրանից որևէ բանի, կամ այնպես վարվեմ, որ դրժեմ հավատարմությունը նրան կամ նրանից որևէ բանի՝ սուլյն երդման մեջ սահմանված ժամկետի սկզբից մինչև ավարտը: Այն է՝

♦ Այս օրհնյալ պայմանագիրը կնքվեց [մի կողմից] մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի՝ ամենապատվելի տեր, իմաստուն, արդարամիտ, հաղթական, աշխարհի և կրոնի սուր, իսլամի և մուսուլմանների սուլթան, Աբու ալ-Ֆաթհ Կալավուն ալ-Սալիհիի՝ հավատացյալների վեհապետի գործակից, նրա զահաժառանգ որդու՝ տեր ալ-Մալիք ալ-Աշրաֆի՝ աշխարհի և կրոնի բարօրություն, հավատացյալների վեհապետի օգնական ընկեր, Ալլահը թո՛ղ հավերժացնի նրանց սուլթանությունը, և [մյուս կողմից] Կոստանդինի որդի արքա Հալթունի որդի պատվելի արքա (al-malik al-ğalīl) Լալֆունի՝ հայոց արքայի միջև՝ 10 ամբողջական, հաջորդական և շարունակական տարի, տասն ամիս, 10 օր, տասը ժամ ժամկետով, որի սկիզբը [հիջրայի] 684 թ. Ռաբի երկրորդ ամսի 1-ն է՝ հինգշաբթի օրը, որը համապատասխանում է հուլյն Ֆիլիպի որդի Ալեքսանդրի 1596 թվականի Հազիրան ամսի 7-ին և տարածվում է մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տիրույթների վրա՝ նրա բերդերի և ամրոցների, թագավորության, քաղաքների, շրջանների և նրա երկրի հպատակների՝ զորականների, զորքերի, բանակների, աշխարհագորի (hušūd), թուրքմենների, քրդերի, արաբների, մուսուլմանների, քրիստոնյաների, մնացած բոլոր համայնքների մարդկանց՝ անկախ նրանց կրոնից և ով լինելուց, նրանց ունեցվածքից՝ լինի ինչք թե անասունների հոտ, կենդանի թե անշունչ, գիշերով ճամփորդող լինի թե արածեցնող լինի, [տեղից տեղ] շարժվող լինի թե նստակյաց լինի, նրա ցամաքի և ծովի, նրա նավահանգիստների և թե առափնյա շրջանների, դաշտավայրերի և թե լեռների, բնակելի թե ամալի [տարածքների] վրա: Այն է՝ Եգիպտոսի փոխարքայությունը՝ նրա սահմանային ամրությունները և շրջանները, նավահանգիստները և առափնյա շրջանները, ցամաքային տարածքը, Ծովափնյա փոխարքայությունը, վերջինիս առափնյա շրջանները, նավահանգիստները և ցամաքային տարածքները, ալ-Քարաքի շրջանը, ալ-Շաուբաքի շրջանը, ալ-Սալթի և ալ-Բալկա՛ի

չրջանը, Աջլուռնի չրջանը, Սարխաղի չրջանը, ալ-Սաբիբի չրջանը, ալ-Սաֆաղի և ալ-Շափիֆի չրջանը, Դամասկոսի չրջանը, ալ-Բաալբաքի չրջանը և Ասորիքի մյուս բոլոր չրջանները և իսլամական բերդերը, ալ-Հոմսի չրջանը, ալ-Ռահբայի չրջանը և գրավյալ ամրոցները՝ Հիսն ալ-Աքքարը և նրա գրավյալ տարածքները, Հիսն ալ-Աքքարը և նրա գրավյալ տարածքները, Հիսն ալ-Մարկաբը և նրա գրավյալ տարածքներն ու նավահանգիստները, Բուլուռնյասը և ինչը, որ նրա հետ է գրավվել, Բալդան, Ջաբալան, Լաթաքիան, Բալադ ալ-Սիթթը (բառացի՝ «Տիկնոջ երկիր»), Բալատունիսի չրջանը և նրա տարածքը, Սահյունի չրջանը և տարածքը, Շալզարի չրջանը և տարածքը, Համայի չրջանը, Հալեպի չրջանը, Բադրասի չրջանը, Դարպասակի չրջանը, Այնթաբի, Բուրջ ալ-Ռասասի, ալ-Ռավանդանի, Թեյ Բաշիրի, Մանբիջի և Կալ'աթ Ջա'բարի չրջանը, ալ-Բիրայի չրջանը, ալ-Բարքարի չրջանը, ալ-Քախթայի, Կատինայի և Բաբիլոնի չրջանը՝ ընդհուպ մինչև սուլթանական տիրույթների սահմանագիծն Արևելքի թագավորությունների և Ռումի [երկրի] հետ: Այն ամենի վրա, որ մինչև սուլթանականագրի [ստորագրման] օրը գտնվում է մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի կառավարիչների ձեռքին՝ լինեն գրավյալ երկրներ, սահմաններ, հողեր, բերդեր և այն ամենը, ինչ կգրավի Բարձրյալ Աստված մեր տեր սուլթանի և նրա զորքերի, բանակների և ռազմարշավային գնդերի ձեռքով՝ տարածքներ, երկրամասեր, սահմանային ամրություններ, գյուղեր, ավաններ, ամառանոցներ, ձմեռանոցներ՝ արևելքում թե արևմուտքում, հեռու թե մոտիկ, [պայմանագրում] հիշատակված սուլթանական տիրույթները և չհիշատակվածները, նրանում եղած ամեն ոքի և ամեն ինչի վրա:

♦ Մինչև սուլթանականագրի կնքումը Հեթում արքայի որդի Լևոն արքայի ձեռքին գտնվող տարածքները ճանաչվում են որպես նրա տարածքներ¹⁷²:

♦ Մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տարածքը՝ մասնավորեցված կամ ոչ մասնավորեցված, ինչպես նաև արքա Լևոնի ձեռքին գտնվող տարածքը, պիտի անվտանգ և ապահով լինեն հաշտության և զինադադարի հիմքերով: Այն է՝ դրանք և նրանցում եղած բնակչությունը, հրամանատարները, զորքերը և բոլոր նրանք, ովքեր

ինչ-որ առնչություն կամ կապ ունեն իրենց հետ, իրենց տարածքներում եղած ինչքը, անասունների հոտերը, գյուղերը, ցանքերը և ավանները գիշերուզօր, գնալիս և հետ դառնալիս, առավոտյան թե երեկոյան պահպանվում են երկու կողմից, ճանապարհները, բոլոր սահմանագրերը և կողմերը պահպանվում են և պաշտպանվում են՝ ինչպես ցամաքից, այնպես էլ ծովից, վնասակար ներխուժողներից, թշնամության ձեռքերով խաղացողներից, գողացողներից՝ ավազակներից և ելուզակներից, խառնակիչներից: Կողմերից ոչ մեկը որևէ իրավիճակում չի միջամտում մյուսի գործին, եթե դա կարող է հակասել զինադադարի պայմաններին, և դրանով չի խախտում հաշտության սահմանված իրադրությունը և բոլորին քաջ հայտնի իրողությունը:

♦ Երկու կողմերի վաճառականները՝ թե՛ գնացողները և թե՛ եկողները, ազատ ելումուտ են անում իրենց ինչքով, ապրանքներով և վաճառանյութով: Թող որ նրանք ուղեկցվեն մինչև [իրենց] երկրի սահմանը, նրանց ելումուտը չարգելվի, և որևէ պատճառով չվնասվեն:

♦ Պայման է, որ արքա Հեթումի որդի արքա Լևոնը պարտավորվում է մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին և նրա գահաժառանգ որդուն՝ սուլթան ալ-Մալիք ալ-Սալիհին՝ աշխարհի և կրոնի սուր, և [մյուս] որդուն՝ սուլթան ալ-Մալիք ալ-Աշրաֆին, այս պայմանագրի կնքման օրվանից սկսած և մինչև դրա ժամկետի ավարտը՝ յուրաքանչյուր տարի վճարել իր, իր հպատակների, իր տարածքների համար, որ կհիշատակվեն, սահմանված հարկը՝ տարվա կանխիկ գումարի նախօրոք վճարումով, որը կազմում է՝ 500.000 դիրհամ՝ [մոլծեկի] արծաթաձույլ թաֆֆուրիյյա (իմա՝ «թագավորական», «թագվորին») դահեկաններով (al-ṭalağam al-takfūriyya)՝ հաշվված ըստ կշռի, որի կեսը 250.000 դիրհամ է, ինչպես նաև ընտիր նժույգներ ու ընտիր ջորիներ՝ 50 գլուխ՝ ի մասնավորի 25 գլուխ ընտիր աֆադի¹⁷³, 25 գլուխ ընտիր ջորիներ¹⁷⁴, 10 հազար երկաթյա պայտ՝ իրենց մեխերով, որոնք պետք է սուլթանական երկրից ստացված հրամանով տեղափոխվեն այնտեղ, որտեղ որ կպահանջվի¹⁷⁵: Թող որ այդ ամենը յուրաքանչյուր տարի տեղափոխվի նրա թագավորությունից և թող որ առաջին տարում նախօրոք տեղափոխվի և այս սահմանված գումարի մոլծուժը յուրաքանչյուր տարի շարունակվի, մինչև այս օրհնված պայմանագրի [ժամկետի] ավարտը:

♦ Պայման է, որ արքա Լևոնը պարտավորվում է ազատել կալանքի տակ գտնվող մուսուլման վաճառականներին՝ անկախ նրանց համայնքային և ազգային պատկանելությունից, ունեցվածքից, ապրանքներից, [ունեցած] ստրուկներից, հարճերից, ձիերից և ջորիներից, ազատել գերեվարված և իր բերդերում ու իր տարածքում բանտարկություն մեջ գտնվող բոլոր մուսուլմաններին՝ անկախ նրանց ազգությունից, ով լինելուց, և պատրաստվեն ուղարկվելու Բարձր Դուռ, նրանցից ոչ մեկին չուշացնի, ուղարկի բոլորին Բարձր Դուռ: Ինչ վերաբերում է բոլոր այն մուսուլման վաճառականներին, որ մահացել են Լևոն արքայի մոտ բանտարկության մեջ, Լևոն արքան պարտավորվում է մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին փոխանցել իր մոտ բանտարկության մեջ մահացած վաճառականների ունեցվածքը, նրանց ստրուկներին, հարճերին, ապրանքները՝ ոչինչ չթաքցնելով դրանցից և [յուրաքանչյուր] մահացած առևտրականի փոխարեն նույն կարգի մեկ այլ բանտարկյալի ազատ արձակելով: Իսկ ինչքան վատնել է նրա ապրանքներից, ինչքից և ստրուկներից, պիտի դրանց գինը հատուցի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին, Ալլահը հավերժացնի նրա իշխանությունը, և այդ [ամբողջ] ուղարկի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին՝ առանց ներողություն հայցման:

♦ Պայման է, որ մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրն ազատ արձակի և Լևոն արքային ուղարկի Եգիպտոսում և Ասորիքում կալանքի մեջ գտնվող նրա ղեսպաններին, նրանց սպասավորներին և ուղեկիցներին, իսկ եթե կալանքի մեջ լինի մեկը հայ վաճառականներից, ապա նույնպես ազատ կարձակվի իր ունեցած ինչքով:

♦ Պայման է, որ երկու կողմերից ելումուտ անող վաճառականների հետ միջադեպեր չպատահեն, նրանց վրա նոր ճնշող [պարտավորություններ] չդրվեն, և ոչ էլ որևէ կողմում պահնորդական ուղեկցման վճարներն ավելացվեն՝ արդարության և անաչառության վերաբերմունք ցուցաբերելով նրանց նկատմամբ:

♦ Պայման է, որ եթե մեկը Ռումի երկրից, Արևելքի և Արևմուտքի երկրներից, Իրաքից, Բաղդադից, Պարսկաստանից և մյուս բոլոր երկրներից որևէ մեկը մտնի Հայոց երկիր՝ սուլթանական տարածք ուղևորվելու նպատակով՝ լինի առևտրական, հպատակ, ղեսպան կամ այլոք,

պիտի թույլ տրվի նրանց ժամանումը սուլթանական տարածք՝ առանց խոչընդոտելու և արգելելու: Նա չպետք է պնդի, թե իբր նրանք թաթարների (իմա՝ մոնղոլների) հպատակներ են, նրանց զարմից են կամ նրանց հետ առնչություն ունեցողներ են:

♦ Պայման է, որ եթե մուսուլման վաճառականներից որևէ մեկը մահանա արքա Լևոնի տարածքում, պահպանվի նրա ունեցվածքը և հանձնվի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի ներկայացուցիչներին, որպեսզի վարվեն դրա հետ սրբազան օրենսդրությամբ (բնագրում՝ al-šar‘ al-šarīf) համապատասխան: Նույնը վերաբերում է նաև արքա Լևոնին, երբ հայոց երկրի վաճառականներից մեկը մահանա սուլթանական տարածքում:

♦ Պայման է, որ եթե կողմերից մեկի նավը վթարվի մյուս կողմում, ապա դրանում եղած ամեն ինչ պետք է պահպանվի և հանձնվի այն կողմի ներկայացուցիչներին (կառավարիչներին), որտեղից որ մահացած վաճառականը գալիս էր: Իսկ եթե այդ վաճառականը մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի հպատակներից լինի կամ նրա սպասավորներից, ապա պետք է հանձնվի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի ներկայացուցիչներին: Իսկ եթե արքա Լևոնի հպատակներից լինի, պետք է նրան հանձնվի՝ արդարությամբ և անաչառությամբ համապատասխան տնօրինելու դրանք¹⁷⁶:

♦ Պայման է, որ եթե մեկը փախչի մեր տեր սուլթանի տարածքից՝ ով էլ որ լինի, հրամանատար թե հրաման կատարող, ստրուկ լինի թե ազատ՝ անկախ համայնքային, ազգային և կրոնական պատկանելությունից, և մտնի հայոց երկիր, Լևոնն ու նրա ներկայացուցիչները պարտավոր են բռնել նրան և նրա հետ փախուստի դիմածները՝ նրա հետ եղած ուղեկիցների, սպասավորների, ձիերի, ջորիների, կտորեղենի, գումարի և այլնի հետ մեկտեղ թիկնազորով ուղարկել Սուլթանական Դուռ: Իսկ եթե փախչողը քրիստոնեություն է ընդունում և ուրանում իր կրոնը, ապա արքա Լևոնը պարտավորվում է նրան վերադարձնել մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին՝ առանց նրա համար ներում հայցելու և կամ նրա հարցով որևէ բան փաստարկելու: Իսկ եթե արքա Լևոնի հպատակներից, սպասավորներից, զորականներից որևէ մեկը փախչի և իր հավատին մնա, ապա սուլթանի ներ-

կայացուցիչները պարտավորվում են նրան վերադարձնել: Իսկ եթե իսլամական կրոնն ընդունի, վերադարձվում է միայն նրա մոտ եղած ունեցվածքը¹⁷⁷:

♦ Պայման է, որ այն ամենն, ինչ արգելված է սուլթանական տարածքից՝ լինի զենք թե ռազմական սպառազինություն, սովորականի պես կշարունակի արգելված լինել:

♦ Պայման է, որ արքա Լևոնը չի արգելի որևէ վաճառականի կամ ոչ վաճառականի ձեռք բերել ստրուկներ, հարճեր, ձիեր, ջորիներ և մյուս բոլոր ապրանքատեսակները և իրենց հետ ներմուծել սուլթանական տարածք, չի կալանավորի նրանց և ոչ էլ որևէ մեկին թույլ կտա կալանավորել նրանց: [Ընդհակառակը], նա նրանց համար ճանապարհ կբացի, որ ներմուծեն ստրուկներ, հարճեր, ապրանքներ, ձիեր, ջորիներ և մյուս բոլոր [ապրանք]ատեսակները, այլևայլ ազդություն ստրուկներ և հարճեր՝ չնայած նրանց տարբերությունը, և չի կալանավորի նրանցից և ոչ մեկին¹⁷⁸:

♦ Պայման է, որ երբ ավար վերցվի (հափշտակություն կատարվի) կամ երկու կողմերից մեկը սպանվի, ապա սպանողը պետք է հանձնվի հատուցման նպատակով և վերադարձնի հենց ավարը, եթե այն գտնված լինի, կամ էլ նրա արժեքը, եթե կորսված է: Սպանվածի համար նրա ունեցվածքի վերադարձից հետո նրա պես մեկը պետք է գերի մնա՝ հեծյալի դեպքում հեծյալ, աղեղնավոր հեծյալի դեպքում աղեղնավոր հեծյալ, վաճառականի դեպքում վաճառական, հետևակայինի դեպքում հետևակային, գյուղացու դեպքում գյուղացի: Իսկ եթե սպանվողի կամ հափշտակության գործը չբացահայտվի, ապա 40-օրյա ժամանակամիջոց պիտի տրվի հետաքննության համար: Իսկ եթե դեպքը չբացահայտվի, ապա տվյալ կողմի կառավարիչը և մյուս կողմից ընտրված երեք անձ պետք է երգվեն: Եվ եթե ավարի կամ սպանվածի գործը պարզվի երդումից հետո, ապա այդ հարցով ճշմարտության բացահայտման գործընթացը պետք է վերսկսվի:

♦ Արդ, Հռոմկլան՝ իր և այնտեղ նստող հայոց խալիֆան՝ Բաթաղիբուն (իմա՝ կաթողիկոսը), նրա կղերականները և այս կողմում նրանց առնչակից անձինք, նրա ունեցվածքը, թե՛ քաղաքացիները և թե՛

գյուղացիները, նույնպես մտնում են այս զինադադարի գործողության տակ, ինչպես որ սահմանվել է նրանց համար [ալ-Մալիք] ալ-Ջահիրի կնքած զինադադարի [պայմանագրում]¹⁷⁹:

♦ Պայման է, որ արքա Լեոնը չպետք է զբաղվի որևէ բերդի վերաշինությամբ և ոչ էլ ամրացմամբ¹⁸⁰:

♦ Պայման է, որ Ռումի երկրից¹⁸¹ և սուլթանական տարածքներից Լեոնի երկրում գտնվող գյուղացիները վերադարձվեն սուլթանական տարածք: Նույնպես և [սուլթանը] պետք է ազատի նրանց եկեղեցականներից նրանց, ովքեր որ բանտարկություն մեջ կլինեն: Եվ եթե սուլթանական տարածքում Հայոց երկրի որևէ գյուղացի լինի, պետք է վերադարձնի:

♦ Սուլյն զինադադարը՝ իր պայմաններով և իր սահմանված դրույթներով, գործում է մինչև իր ժամկետի ավարտը: Այն չի չեղարկվում երկու կողմերից մեկի տիրակալի մահով, և ոչ էլ փոխարքայի կամ կառավարչի պաշտոնանկությունից կամ փոխարինմամբ, ոչ օտար ոտքի ներխուժմամբ և կամ մոնղոլների կամ այլոց բռնի ձեռքով: Այս զինադադարի դրույթները պետք է շարունակեն գործել: Եվ ես պարտավորվում եմ հավատարիմ մնալ նրա բոլոր պայմաններին և նրա դրույթներից և ոչ մեկից հետ չկանգնել, լրտեսական տեղեկություններ չտալ մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տարածքների և ոչ էլ նրա գործերի մասին, ոչ էլ նրա հպատակների մասին նրանց, ովքեր մտադրություն ունեն արշավանք ձեռնարկել նրանց դեմ՝ վնաս պատճառելու կամ վնասելու նպատակով, չմտնել այնպիսի խորհրդակցություն մեջ, որը չարիք կամ բռնություն կհարուցի, չեմ հաճոյանա մեր տեր ալ-Մալիք ալ-Մանսուրի թշնամիներից որևէ մեկին, չեմ աջակցի և չեմ օգնի նրանց, նշանացի ոչինչ չեմ հայտնի և ոչ էլ գրելով, նամակագրություն, գրագրություն և ոչ էլ բանավոր: Այլ ապավեն կլինեմ իմ անձին և իմ երկրին, ամեն ջանք կգործադրեմ մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տարածքները պաշտպանելու համար, կարգելեմ նրան վնասելու կամ թշնամություն նկրտում ունեցողների անցումն իմ երկրով:

Իսկ եթե կողմերից մեկը չեղարկի [պայմանագիրը], թող Ալլահը թույլ չտա դա, վաճառականները, դեսպանները, ճամփորդները պետք

է ապահով և անվտանգ լինեն՝ իրենց անձով, ինչքով, ապրանքներով, ստրուկներով, հարճերով, ձիերով, ջորիներով: Այդժամ 40-օրյա ժամկետ պիտի տրվի, մինչև որ յուրաքանչյուր ոք անխոչընդոտ վերադառնա իր անվտանգ վայրը, հայրենիքը՝ իր ապրանքներով և ունեցվածքով, այս օրհնյալ պայմանագրի ժամկետներում, որի սկիզբը Մուհամմադ մարգարեի, Ալլահի աղոթքներն ու խաղաղությունը նրա վրա, հիջրայի 684 թվականի օրհնյալ Ռաբի ալ-ախար ամսի 1-ն է, որը համապատասխանում է հուլյն Ֆիլիպի որդի Ալեքսանդրի 1595 թվականի Հագիրան ամսի 7-ին: Երգվում եմ Աստծով, իմ կրոնի, դավանության և հավատքի ճշմարտությամբ: Պարտավորված եմ այս ամբողջ պայմանագրով, այս երգումն իմ երգումն է, և ես Հեթումի որդի Լեոնն եմ: Մտադրությունն իմ տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Սայֆ ալ-Դուռյա վալ-Դին Կալավուն ալ-Սալիհի մտադրությունն է և նրա որդիների՝ տեր սուլթան ալ-Մալիք ալ-Սալիհ Ալա՝ ալ-Դուռյա վալ-Դինի և տեր սուլթան Աշրաֆ Սալահ ալ-Դուռյա վալ-Դինի մտադրությունը, ինչպես նաև իմ երգումը նրանց անունից վերցնողի մտադրությունը: Ես, բացի նրանց մտադրությունից, այլ մտադրություն չունեմ և բացի նրանց նպատակից այլ նպատակ չունեմ: Թո՛ղ Աստված վկա լինի ինձ դրա համար, Աստված է երաշխավորն այն բանի, ինչ ասում եմ, թող Քրիստոսը վկա լինի ինձ դրա համար: Պայմանը կայացավ, և համաձայնություն եղավ վերոհիշյալ ամսաթվի շուրջ¹⁸²:

Էմիր Ֆախր ալ-Դին ալ-Մուկրի ներքինին ղեսպանների հետ ճանապարհ ընկավ Սսի տիրոջ մոտ՝ ձեռքին պայմանագիրը, և վերադարձավ վերոհիշյալ սահմանված գումարով: Նա [իր հետ] գերությունից վաճառականներ, մուսուլմաններ բերեց՝ իրենց ունեցվածքով և ապրանքներով: Եկավ նրա ղեսպանը՝ պարոն Վահրամ¹⁸³, որ նրա պետության մեծամեծերից մեկն էր: Ներկա էր նաև Քամանդուրը, ով միջնորդել էր այս հաշտության համար:

Երբ սուլթանի մոտ ժամանեցին, վերջինս ազատ արձակեց Դամասկոսում գտնվող բոլոր կալանավորված ղեսպաններին և նրանց սպասավորներին: Հրամայեց նաև ազատել Եգիպտոսում գտնվող նրա բոլոր ղեսպաններին: Սակայն գերիների և գումարի մի չնչին մասն ուշացավ, և նա մարդ ուղարկեց, որ պահանջի այն: Պայմանագրով

նախատեսվում էր բոլոր գերիների ազատագրում, բայց Իբն Կարամանի որոշ առաջնորդներ և մի խումբ այլ գերիներ ուշացան: Կարամանյանների և ռումեցիների հարցով փաստարկում էր, որ նրանք իր մոտ գերի են և իր թշնամիները, իրենց միջև պատերազմներ կան: Եվ եթե ինքը պիտի նրանց գերիներին ազատի, ապա թող նրանք էլ ազատեն իր գերիներին: Ռումեցիների համար փաստարկում էր նաև, որ նրանք անհավատների հպատակություն տակ են: Մեր տեր սուլթանն [այս առիթով] ասաց. «Բոլոր մուսուլմանների գործն իմ պարտականությունն է: Նրանք ինձանից բացի [այլ] սուլթան չունեն, որ արձակի իրենց շղթաները և կովի իրենց թշնամիների դեմ: Անհրաժեշտ է, որ կարամանցի գերիներն արձակվեն, որովհետև նրանք իմ հպատակության տակ են և կարող են օգնություն խնդրել՝ միայն իմ դրոշը բարձրացնելով»: Դեսպանները պարտավորվեցին վերագարձնել նրանց: Բանը սրանով ավարտվեց, և ճանապարհեցին նրանց, ովքեր իրենց հետ պետք է բերեին [գերիներին] ¹⁸⁴:

3.3 AL-ALṬĀF AL-ḤAFIYYA MIN AL-SĪRA
AL-ŠARĪFA AL-SULṬĀNIYYA AL-MALIKIYYA AL-AŠRAFIYYA
«[ԳԻՐԲ] ՍՈՒԼԹԱՆ ԱԼ-ՄԱԼԻԲ ԱԼ-ԱՇՐԱՖԻ ԱԶՆՎԱԶԱՐՄ ԿՅԱՆՔԻ
ԹԱՔՆՎԱԾ ԲԱՐԵՀԱՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

էջ 48 [հիշրայի 691 թ. Սաֆար ամիս – 1292 թ. հունվար/փետրվար]

Սսի տիրոջ հետ կապված պարագաներ

Դրանցից է այն, որ նա մոնղոլների մոտ էր գնացել, և այդ ժամանակ ժամանեց իր երկիրը՝ իր հետ բերելով մուսուլման գերիների: Նա նրանց մի մասին ազատ արձակեց, մյուսներին բաշխեց իր բերդերում: Նա իր երկու դեսպաններին՝ Լիֆունին և Մինջալին¹⁸⁵, ուղարկեց սուլթանական արքունիք՝ Սսի կողմից ուղարկելով [սահմանված] հարկաչափից հարյուր հազար դիրհամ, իսկ ձիերից և ջորիներից՝ 58 գլուխ՝ այդ թվում 10-ը որպես նվեր:

فَتُوجُّ بِوَالِيٍّ آخِرًا بَعْدَ أَوَّلٍ كَمَا نَظُمْتُ دَرَّ الْخُورِ الْكَوَاغِبُ
إِذَا أَنْفَضَ الْحَيْشَ الَّذِي هُوَ سَائِرٌ نَلْفَاهُ جِلْشَ بِالْغَنِمَةِ أَيُّبُ
❁ ذِكْرُ أُمُورٍ تَتَعَلَّقُ بِصَاحِبِ سَيْئِسٍ ❁

مِنْ ذَلِكَ أَنَّهُ كَانَ تَوَجَّهَ إِلَى جِهَةِ النَّارِ فَلَمَّا كَانَ
فِي هَذَا الْوَقْتِ حَضَرَ إِلَى بِلَادِهِ وَمَعَهُ أَسَدِي مِنَ الْمُسْلِمِينَ
أَطْلَقَ بَعْضَهُمْ وَفَرَّقَ جَمَاعَةً مِنْهُمْ فِي قِلَاعِهِ وَسَيَّرَ
رَسُولَيْهِ لِيَقُونَا وَمِنْ جَمَالِ إِلَى الْأَبْوَابِ الشَّرِيفَةِ وَحَصَّدَ